№ 108 ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16

1907
ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis. Rédaction „Mschak“
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ.

# ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ

ՔՍԱՆ ռուբլի
Մի ամվայ համար 1 ռուբլի

## ԳԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քաղաքային վարչութիւնը սրանով հաղորդում է ի գիտութիւն ընդհանուրի, որ Թիֆլիս քաղաքի, Թիֆլիսի և Բօրչալուի գաւառների քաղաքային ընտրողների համագումարը նշանակված է ընդհանուր-տեղական կուրիայից սեպտեմբերի 27-ին և ռուսական կուրիայից սեպտեմբերի 30-ին։ Ընտրութիւնները կը կատարվեն համագումարի 1-ին բաժանմունքում (Թիֆլիսի 1, 2 և 10 քաղաքամասի և Բօրչալուի գաւառի քաղաքային ընտրողների). Զուբալովի ժողովրդական տանը, 2-րդ բաժանմունքում (3, 4, 5 և 9-րդ քաղամաս) քաղաքային վարչութեան շինութեան մէջ, 3-րդ բաժանմունքում (Թիֆլիսի 6, 7 և 8-րդ քաղաքամասի և Թիֆլիսի գաւառի քաղաքային ընտրողների) Վարշամովի թատրոնում (Հալլաբաբ). և ռուսական կուրիայի Զուբալովի ժողովրդական տանը։

Համագումարի 1-ին բաժանմունքում պէտք է ընտրվեն 2 պատուիրակներ, երկրորդ և երրորդ բաժանմունքներում երեքական և ռուսական կուրիայում տասնմէկ պատուիրակներ։

Ներքին գործերի մինիստրի կողմից հաստատված հրահանգի համաձայն, ընտրողական թերթիկը կամ կէս թերթը (նայած ընտրվող պատուիրակների թիւին) սովորական մեծութեան հաստակ սպիտակ թուղթ է և կազմվում է ռուսերէն լեզուով։ Ընտրողական թերթում պէտք է մատնանշված լինեն այն անձերի ազգանունները, անունները և հայրանունները, որոնց ընտրողը ձայն է տալիս, նաև յիշեալ անձերի դիրքը և հասցէն կամ ցուցակում նրանց ազգանունների կողքին նշանակված համարները։ Թերթիկի ոչ երեսին և ոչ հակի կողմը չը պէտք է լինի ոչ նկատողութիւն, ոչ նշան, ոչ էլ ուղղված և ջնջած։ Այն թերթիկները, որոնք յիշեալ պահանջի համեմատ չեն լինի, անվաւէր կը ճանաչվեն։ Վերոյիշեալ տեղեկութիւնները մացվում են ընտրողական թերթիկի մէջ ըստ հայեցողութեան ընտրողի (գէշով, տպագրութեամբ, վիմագրութեամբ կայն)։ Ընտրողական թերթիկները կազմում են ընտրողները առաջուց, կամ ընտրողական մասնաժողովի շինութեան մէջ։ Ընտրողական թերթիկները արվում են քաղաքային վարչութեան կողմից ուղարկված ծրարներով, որոնք միայն կպցվում են, առանց որևէ կնիք դրոշմելու։ Մրաբում կարելի է գնել միայն մի ընտրողական թերթիկ։ 1—3

Քանդակագործ Մ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ Թիֆլիսից մեկնելու պատճառով նրա ատելիէում շատ էժան գներով վաճառվում են մօտ 70 կտոր իր գեղարուեստական գործերը՝ մէկ բուռլուց մինչև 25 ռուբլի, բացի չորս կտորից. ցանկացողները կարող են տեսնել առաւօտեան ժամը 11-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը, ամեն օր, մինչև սեպտեմբերի 26-ը։ այս գործերը կարող էին ձեռք բերել զանազան բարեգործական հիմնարկութիւններ իրանց վիճակախաղերի համար. գնալու պատճառով պատուէրներ չեն ընդունվում։
Ատելիէի հասցէն՝ Абасъ-абатская пл. домъ кн. Аргутинскаго № 1. 1—1

ԲԺԻՇԿ

## Ա. Մխիթարեանց

Վերադառնալով կովկասեան հանքային ջրերից՝ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վենէրական և ժորթու հիւանդութիւններ. առաւօտեան 1—3 ժ., երեկ. 6—8 ժ., Սօլոլակ, Բեհբութեան փողոց № 33։
առ. (ա. օ.)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհարման օղակներ. Վերջին տեղեկութիւններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մարքերի և փասատեր. Կ. Բեհբութեանի թաղումը. Ժողովրդական համալսարանում. Պետական Դումայի ընտրութիւնների մասին. Թուրք կեանքի ու գրականութեան շուրջը. Խօլերա. Բաղուի արդիւնաբերական կեանքը. Տեղեկութիւններ գաւառից. Ընտրութիւնները Կովկասում. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Հայրենասիրութիւն և սոցիալիզմ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Հայ կեանքէն։

## ԸՆԴՀԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐ

I

Պարզիւն է և վտանգաւոր խօսել զինաթափութեան մասին Հայաստանի կօնֆիդերացիայում։

Այդպէս էին ասում քաղաքագէտները։

Պարզիւն էր, որովհետև իւրաքանչիւր պետութիւն պէտք է շարունակէր իրագործել իր ռազմական պարտաւորութիւնները։

Վտանգաւոր էր, որովհետև զինաթափութեան մասին խօսելու ժամանակ վիճաբանողները պէտք է շօշափէին այս ու այն պետութեան զինուորական խնդիրները և այդպիսով պէտք է ստեղծէին մի շարք անյարմար դրութիւններ։

Դուցէ այդ այդպէս է, բայց մարդկային միտքը և խիղճը չեն կարող զոհանալ մի այդպիսի առարկութեամբ և հաշտվել տիրող վիճակի հետ։ Պատերազմի ուրուականը ճնշում է ժողովուրդների, իսկ անվերջ ռազմական պատրաստութիւնները սպառում են ժողովուրդների կուլտուրական ոյժերը և բարօրութիւնը։

Եթէ Հաագայի կոնֆերենցիան անկարող էր ժամանակակից այդ մեծ ցաւի առաջն առնել ընդհանրապէս, նա պարտաւոր էր մի շարք նախապատրաստական միջոցների ձեռնարկել, որպէս զի վերանան այն աւիժները, որոնք պատճառ են դառնում պատերազմների և զրդում են պետութիւններին զինվել անընդհատ։

II

Մի Շվէյցարիա, մի Բելգիա, մի Հոլանդիա առիթ չեն դառնում միջազգային միջամտութիւնների համար, և նրանց պատճառով մեծ պետութիւնները չեն ընդհարվում միմեանց հետ։

Ինչու։

Որովհետև այդ երկիրները ապրում են կանոնաւոր կուլտուրական և քաղաքական կեանքով, որովհետև իրանց միջոցներով բաւարարութիւն են տալիս իրանց ներքին պահանջներին։

Այդպիսի երկիրներ են դարձել նաև Սերբիան, Յունաստանը, Շերնոգորիան, Ռումինիան, Բոլգարիան, որոնց պատճառով մի քանի տասնեակ տարիներ սրանից առաջ Եւրոպան յուզվում, տարուբերվում էր, և պատերազմների մէջ ընկաւ։

Բայց այդպէս չեն Մակեդոնիան, Հայաստանը, Արաբիան, դրուզների երկիրը և ամբողջ Օսմանեան պետութիւնը։ Այդպէս չեն Մարոկկոն, Պարսկաստանը, Չինաստանը, Կորէան։

Այդ երկիրներում միշտ սպասվում է եւրոպական միջամտութիւն, որովհետև պետական-կուլտուրական կեանքը այնտեղ չափազանց անկանոն և երերուն վիճակի մէջ է, որովհետև պետական կարգերը և օրէնքները չեն ապահովում քաղաքացիների կանոնաւոր կեանքը։

III

Անշուշտ, քանի Եւրոպան կուշացնէ ազդեցութիւններ գործադրելու և բարեկարգութիւններ մտցնելու հարցը այնպիսի երկիրներում, ինչպէս վերև յիշածներն են, այնքան աւելի երկար ժամանակ նա կը թարախէ այն վերքերը և պալարները, որոնք երևան են եկել մարդկութեան ընտանիքում և սպառնում են բարդութիւններ առաջացնել միջազգային յարաբերութիւնների մէջ։

Ի հարկէ պատերազմների պատճառը միայն այդպիսի երկիրների գոյութիւնը չէ։ Կան և շատ ուրիշ պատճառներ։ Բայց անբարեկարգ և ճնշված երկիրների ողբն ու ցաւերը ժամանակ առ ժամանակ այլ ևս չէ կարողանում պարփակվել իր առօրեայ շրջանում և դուրս է պռոմիկում դէպի աւելի մեծ հրապարակներ, յուզում է մարքը և ստեղծում միջազգային իրարանցումներ։

Եւ քանի անկարգ կը մնան երկիրները և անապահով ժողովուրդների կեանքը, այնքան ժամանակ պէտք է երկիւղ կրել վտանգներից և անսպասելի պատահարներից, որոնք կարող են իրարով տալ քաղաքագէտներին և ապա պետութիւններին իրանց զօրքերով։

Եւրոպան ինքը պարտական է հրաբուղխներ, որոնք մշտական սպառնալիք են մնում նրա համար։

IV

Մի ժամանակ պետութիւնները կըռւում էին միմեանց հետ ընտանեկան պատճառներով, մի ուրիշ ժամանակ կրօնական հակառակութիւնների և քաղաքական տարբեր մտածողութեան պատճառով, այժմ յաճախ պետութիւնները ընդհարվում են տնտեսական շահերի դրդումներով։

Եթէ զրաղաշտական կրօնը իրանի շրջանում, իսլամը Առաջաւոր Ասիայում և միջերկրանի շրջանում, կաթոլիկ կրօնը Արևմտեան Եւրոպայում կարողանում էին գոռ պատերազմներ առաջ բերել, որոնք տևում էին ոչ թէ ամիսներ, այլ տարիներ և երբեմն տասնեակ տարիներ, այժմ մեզ համար թւում են անմիտ և անըմբռնելի։ Եւրոպան դարերի տանջանքից յետոյ հրատարակեց խղճի, կրօնի ազատութիւն և վերացրեց այն պատճառներից մէկը, որոնք յարատև իրարանցումներ և ընդհարումներ էին պատճառում և թունաւորեցին երկար շարք մարդկային սերունդների կեանքը։

Եւ որքան մարդկութիւնը շատ մշակէ ու մարմնացնէ կեանքի մէջ ընդհանուր սկզբունքներ ու հաստատէ բարեկարգութիւն ժողովրդական բոլոր խաւերում, այնքան կը մօտենայ ընդհանուր հաներաշխութեան և խաղաղասիրութեան գաղափարի իրագործման։

Ա. Բալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լօնդօն, 14 սեպտեմբերի։ Բէյտէրի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն Պարսից ծոցի հարցը վերջնականապէս քննել են Ռուսաստանի և Մեծ-Բրիտանիայի կառավարութիւնները։ Թէև բանակցութիւնների հետևանքները մացրած չեն նոր դաշնադրութեան բնագրի մէջ, բայց և այնպէս բրիտանական կառավարութիւնը հաւաստիացաւ, որ Ռուսաստանը ընդունում է Մեծ-Բրիտանիայի յատուկ դրութիւնը Պարսից ծոցում։
(«Հ. Գ.»)

Կ. Պոլիս, 14 սեպտ.։ Վանի վալիի պաշտօնազրկութիւնը հետևանք էր այն բանի, որ նա բողոքել էր պարսից երկիրը թիւրքաց զօրքերով գրաւելու դէմ։ Ասում են, որ պաշտօնազրկութեան հրամանը վերջին օրերս յետ էր վերցված։
(«Բ.Թ.»)

Բաթում, 15 սեպտ.։ Սպանված Ալի-բէյի գիակը գտնված է և մատդրութիւն կայ ուղարկել Կ. Պոլիս։
(«Հ.Գ.»)

Վանից մեզ գրում են օգոստոսի 27-ից. «Մեր դրութիւնը օրէ օր կը վատանայ։ Հացի գինը թէև իջած է չնչին չափով, բայց այս տարուան կարիքն ալ չեն խոստանար մեղմել ժողովրդի ծով թշուառութիւնը։ Մեր այս թշուառութիւնը աւելի ընդհանուր և հետզհետէ աւելի սոսկալի կը դառնայ վարչութեան ստեղծած նորանոր մեքենայութիւններով և սարսափներով։

Երէկ հոս տրուած միսսիան կը կայանայ կարծես աւելի խոր և մանրամասն ատելութեամբ՝ զրգռել հայ և թիւրք տարբեր իրարու դէմ և նոր գրժբաղդութիւններու ու աւերածութեան աւիթներ հնարել։ Շատանգամ գիշերը լրտեսներ ծպտուած կը պտտին զանազան թաղեր, հվ գիտէ ինչ սև գաւեր սարքելու համար։ Կը մտնին զօրանոցներ լրտեսելու համար զինուորների տրամադրութիւնը և վերաբերմունքը, այնուհետև կը հարցափորձեն թէ արդեօք վալիի ստորագրները հայերի վերաբերմամբ դուրեկան են անոնց համար։ Արդեօք անոնց մէջ ևս գոյութիւն ունին թիւրք յեղափոխութեան նոր շաբաթներու և զժդոհութեան նշաններ, սաղմեր։

Շերբակալութիւններ օրէ օր կը շատանան։ Հարցաքննութիւնը նը մատնուին թիւրքական բանտ կոչուած սարսափելի քաւարանին։ Բանտարկուած են նաև Կոտուց Անապատի երկու վարդապետներ իրենց անյայտ յանցանքի համար։ Քննութիւն, փաստ գոյութիւն չունին արդարակորով սուլթանի նոյնքան արդարակորով ներկայացուցչի համար։

Ակի-բէյը գնաց։

Առժամանակեայ փոխ-կուսակալի պաշտօնը յանձնուած է Պաշղալէի միւթէսարրիֆին, որ ըստ երևոյթին բարեխիղճ մէկը կերևայ»։

Կամաբ

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

Հայրենիքը դատարկվում է—ահա այն բօթը, որ արտասահմանեան հայ լաւագիրները բերում են մեզ ամեն օր։ Եթէ Հայաստանը հայերից դատարկվի, հայն ևս աշխարհիս երեսից ուշ կամ վաղ կը վերանայ,—շատ իրաւացի կերպով նկատում է մի թերթ («Լուսաբեր»)։ Պէտք է բոլոր այժմը լարել, պէտք է գերմարդկային ճիգեր թափել այդ վերանաս մատնդի առաջն առնելու։ Բայց ինչպէս։

Այդ հարցը տալիս են ամենքը և ոչ ոք ոչ մի իրական միջոց չէ առաջարկում, որովհետև իրական միջոց ով կարող է գտնել այդպիսի մի մեծ ազէտ դարմանելու համար։

Հայ ժողովուրդը Թիւրքիայում այլ ևս ոչ ոքից ոչ մի իրական օգնութիւն չէ սպասում. նա որևէ յոյս դնել իր կառավարութեան վրա չէ կարող, որովհետև այդ կառավարութեան բոլոր ջանքերը ուղղված են առ այն, որ արտաքսէ Հայաստանից հայ տարրը, որը նա նկատում է իրրև յեղափոխական և խռովարար, և նրա տեղ բնակեցնէ մուսուլման տարրեր։ Հայ ժողովուրդը այլ ևս ոչ մի յոյս և վստահութիւն չէ կարող տածել դէպի եւրոպական պետութիւնները, մանաւանդ դէպի Բերլինի դաշնադիր պետութիւնները։ այսօր արդէն օր ցերեկի նման պարզ է ամենքի համար, որ եւրոպական պետութիւնները անկարող են որևէ քայլ անել ի նպաստ հայերի զանազան քաղաքական պատճառներով։ Հիանթափումն տիրում է հայ ժողովրդի մէջ և հայ յեղափոխական կազմակերպութիւնների վերաբերմամբ, որոնք իրանց գործունէութիւնով ահռելի և անդարմանելի կերպով վատթարացրին հայութեան վիճակը և թիւրքաց կառավարութեան հացին իւղ քսեցին։ Դեռ նորերս մենք տեսանք, թէ ինչ աղէտալի հետևանքներ ունեցաւ Սուլթանի դէպքը։ ճիշտ է, անձնուէրների մի խումբ իր մահուամբ կնքեց իր աննպատակ և անօգուտ քայլը և իր ընկերների կողմից հերոս տիտղոսի ու փառաւոր հոգեհանգստեան յիշատակների արժանացաւ, բայց ամբողջ հինգ գիւղեր աւերվեցին, կործանվեցին և հազարաւոր հայեր սրի ու թրի քաշվեցին։

Եւ բնական է, որ հայ ժողովուրդը, հասնելով վերջին ծայր յուսահատութեան, այլ ևս ոչ մի տեղից ոչ մի յոյս չունենալով, միւս կողմից էլ սովի ճիւաղը աչքի առաջ ունենալով, ներկայումս զբաղվել է մի տենչանքով, որ նա նկատում է իրրև փրկութեան միջոց—գաղթել, գաղթել և հեռանալ մայր-հայրենիքից։ Այդտեղ այլ ևս չէ գործում նրա բնական միտքը. այստեղ միտքը, խելքը դադարել է գործելուց։

Բայց մենք, Թիւրքիայից դուրս ապրող հայերս, քաջ ըմբռնում ենք, որ մայր-հայրենիքի դատարկումը՝ հայութեան ջնջումն է նշանակում, ուստի և գալիս ենք, ինչ ելք մտածել, ինչ ճար գտնել։

Եւ ահա այժմ իրրև միակ միջոց, միակ ելք գտնում են Ազգային մի Համաժողովի գումարումը, որ կարողանար մշակել ազգային քաղաքականութեան ծրագիրը, որի գործադրութեամբ կարելի լիներ բարեփոխել Հայաստանի վիճակը և վերջ դնել գաղթման ծրագրին։

Այդ Համաժողովը, իրրև ընդհանուր հայ ազգի բերան և արտայայտիչ, իրրև ընդհանուր հայ ազգի ներկայացուցիչ, իր դատավճիռը կարտասանէ այն ուղղութեան մասին, որով ազգային քաղաքականութիւնը պէտք է ընթանայ այսուհետև։ Հարկ կայ ասելու, որ յեղափոխական կուսակցութիւնները չը պէտք է մասնակցեն այդ Համաժողովին, որը գոյացած [illegible] ծրագիրները, այլ նրանք կարող են իրանց ներկայացուցիչների միջոցով պաշտպանել Համաժողովի առաջ իրանց ծրագիրները և բացատրութիւններ տալ։

Ազգային ապագայ քաղաքականութիւնը որոշելու համար մի Համաժողովի գումարման անհրաժեշտութիւնը զգացել են և իրանք յեղափոխականները, և դրա ապացոյցը՝ այն կոչն էր, որ արեց հնչակեան յայտնի գործիչ Մուրադը և որին, ինչպէս հաստատում են մեզ, ձայնակցեց և դաշնակցական յայտնի գործիչ Անդրանիկը, բայց առաջին՝ Մուրադը առաջարկում էր գումարել ոչ թէ համազգային ժողով, այլ յեղափոխական կազմակերպութիւնների համաժողով, և երկրորդ՝ Մուրադի կոչը, ինչպէս յայտնի է, մերժվեց Դաշնակցութեան կողմից, որը ունի, ի հարկէ, իր պատճառները այդպիսի մի ժողով չը ցանկանալու համար։

Իսկ մեր առջև դրված կապիտալ հարցի՝ հայութեան գոյութիւնը պահպանելու հարցի լուծման համար անհրաժեշտ է ոչ թէ կուսակցական, այլ համազգային ժողով։

«Համաժողովը—շատ հիշտ նկատում է «Լուսաբեր»—ազգային համաձայնութիւն կարող է ստեղծել, վանզի ոչ ոք՝ անհատ կամ կազմակերպել մարմին՝ իրաւունք ունի այդ ժողովին մէջ վերամբարձ գլխով պտնդալ։ Հայաստանի օրուան վիճակը ոչ օրի իրաւունք կուտայ յայտարարելու թէ Հայրենիքին համար օգտակար ծառայութիւն մը մատուցած է, եթէ մեծամեծ չարիքներ իսկ պատճառած չըլլայ։ Յեղափոխական կամ հակա-յեղափոխական, չեզոք կամ գործող, ամեն հայ խոնարհամիտ երևնալու պարտաւոր է այն օրը, որ Հայաստանի վրա Յուսահատութիւնը կը սաւառնի»։

Ողջունելով Ազգային Համաժողով գումարելու գաղափարը, մենք պէտք է ասենք, որ արտասահմանում—Եւրոպայում և Եգիպտոսում—արդէն այդ ուղղութեամբ քայլեր են լինում։ Մնում է մեզ, Ռուսաստանի հայերիս, միացնել մեր ջանքերը և գտնել բերել այն միջոցը, որ այժմ հայութեան փրկութեան միակ միջոցն է համարվում։

Շանրեաբ

## Կ. ԲԵՀԲՈՒԹԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Այսօր Թիֆլիսում տեղի կունենայ հանգուցեալ իշխան Կոնստանտին Բեհբութեանի յուղարկաւորութիւնը և թաղումը։

Կ. Բեհբութեանը յայտնի է իրրև ժուրնալիստ և հասարակական գործոյ։ Եօթանասնական թւականներին նրա խմբագրութեամբ սկսեց լոյս տեսնել Թիֆլիսում «Тифлисскій Вѣстникъ» անունով մի թերթ,

որ խմբեց իր շուրջ այն ժամանակվայ սակաւաթիւ գործողներին և զարթեցրեց հետաքրքրութիւն հասարակութեան մէջ դէպի հրապարակային խօսքը։

Բեհրութեանը գործեց նաև իբրև հոգաբարձու Ներսիսեան դպրոցում և հանդէս եկաւ իր մի քանի ծրագիրներով, որոնցից մէկն էլ ծիսական կազմակերպութեան ծրագիրն էր, որ յատուկ քննութեան առարկայ դարձաւ Թիֆլիսի հասարակութեան ներկայացուցիչներից կազմված մի քանի ժողովներում, բայց ընթացք չը ստացաւ զանազան պատճառներով։

Վերջին տարիներում իշխան Կ. Բեհրութեանը ապրում էր Պետերբուրգում։

Նա վախճանվեց անսպասելի կերպով երկաթուղային գնացքի խորտակման ժամանակ Գերմանիայում Էյդկունեն կայարանի մօտ։

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Թիֆլիսի ժողովրդական համալսարանը վերսկսել է իր գործունէութիւնը։

Տեղի են ունեցել թէ վարչութեան և թէ առանձին սեկցիաների մի քանի նիստեր։

Վարչութիւնը որոշել է անմիջապէս ձեռնարկել գործունէութեան բոլոր ձևերին, այն է, կազմակերպել հրապարակային դասախօսութիւններ և ժողովրդական կօնցերտներ, բանալ հասակաւորների համար թէ գրագիտական և թէ մասնագիտական դասընթացքներ և այլն։

Ազգայնական սեկցիաները սկսում են գործել և ներկայ ամսվայ ընթացքում կը կազմակերպվեն վերջնականապէս։

Հայկական սեկցիան որոշել է ունենալ միայն մի դպրոց հասակաւորների համար Ներսիսեան դպրոցի շրջանում, իսկ Հաւլաբարի դպրոցը առ այժմ փակում է։

Օսական սեկցիան կը սկսէ իր դպրոցական գործունէութիւնը այսօրվանից, սեպտեմբերի 16-ից։ Դարնան ամիսներում օսական դպրոցը յաճախում էին սկզբում 70, յետոյ, ամառը, 30 հասակաւոր աշակերտներ։

Ասորական սեկցիան պէտք է դպրոց պահէ Վերայում։ Աշակերտ ստացում է 40—45 հոգի։ Ուսուցիչներ կը լինեն երկու հոգի, որոնցից մէկը՝ Սօլոմոնովը, սովորել է Ուրմիայում և գիտէ բացի ասորերէնից նաև անգլերէն լեզուն։

Վրաց սեկցիան դեռ չէ սկսել իր գործունէութիւնը, բայց շուտով նա կը ձեռնարկէ գործի։

Հրէականը առայժմ ունի միայն մի դասարան։

Ռուսական սեկցիան յոյս ունի աւելի լայն գործունէութիւն ունենալ քան միւսները, որովհետև նրա տրամադրութեան տակ կարող են լինել մինչև այժմ եղած լսարանները, նաև երկաթուղիական նախ[illegible] կարող է գտնել մինչև 1500 մարդ։

Երկու շաբաթից յետոյ, սեպտեմբերի 30-ին, կը կայանայ մի կօնցերտ ընկերութեան օգտին։ Կօնցերտի կազմակերպութիւնը վերցրել է իր վրա Քարթվելով։

Ա. Բ.

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

✦ «Свобод. Мысль» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրութիւնը ներկայումս արդէն վերջացրել է այն հրահանգների մշակումը, որոնցով պէտք է ղեկավարվեն ադմինիստրացիայի ներկայացուցիչները նախընտրական պայքարի ժամանակ։ Ընտրողական ժողովները դրվելու են խիստ ձևական պայմանների մէջ։ Ընտրողական ժողովներին չեն թոյլատրվի ներկայ լինելու ոչ միայն կողմակի մարդիկ, այլ և ուրիշ մասի ընտրողները։ Այդ կանոնները ճշտիւ կատարելու անհրաժեշտութեան մասին շեշտված կը լինի հրահանգի մէջ։ Հրահանգներում նոյնպէս կը յիշվի, որ ժողովները պէտք է փակել միայն այն դէպքերում, երբ իսկապէս ժողովը ապօրինի բնաւորութիւն կը ստանայ։ Կառավարութեան գործողութիւնների քննադատութիւնը չը պէտք է ժողովի փակման պատճառ համարվի, բայց ակներև զրգռումն կառավարութեան դէմ չը պէտք է թոյլատրվի, չը նայելով՝ որ ժողովը համարվում է փակ։ Եթէ ժողովում կոչ է անվում մասնակցել Դումային բացառապէս պրօպագանդա անելու նպատակներով, այդ ևս կը համարվի պատճառ ժողովները փակելու համար։ Բացի դրանից հրամայվում է ժողովներին ներկայ լինելու համար ուղարկել ադմինիստրացիայի այնպիսի ներկայացուցիչներին, որոնք լաւատեղեակ են քաղաքական հարցերին։ Կասկածի դէպքում, ժողովներին ներկայ եղող ադմինիստրացիայի ներկայացուցիչները պարտաւոր են անյապաղ դիմել բարձր իշխանութեան։

✦ «Бирж. Вѣд.» լրագրի ասելով, սեպտեմբերի 7-ին Պետերբուրգի քաղաքապետը համապատասխան հրահանգներ է տուել գործարանական շրջանի ոստիկանական բոլոր ստորին պաշտօնեաներին բանւորական ընտրութիւնների վերաբերմամբ։ Հրամայված է լուրջ ուշադրութիւն դարձնել ֆաբրիկաների և գործարանների վրա, որպէսզի գործարանական շրջանում և ոչ մի տեղ ժողովներ, համախմբումներ և միտինգներ տեղի չունենան։ Գործարանատէրերն էլ իրանց կողմից նախազգուշացրել են գործարանների դիրեկտօրներին, որպէսզի թոյլ չը տան բանւորներին արհեստանոցներում ժողովներ անել, ի նկատի առնելով այն վտանգը, որ սպառնում է գործարանի փակման ադմինիստրատիվ կարգով։

✦ «Р. В.» լրագիրը լիազօրութիւն է ստացել յայտնելու, որ «Петерб. Газета» լրագրի յայտնած տեղեկութիւնը գեներալ Սուբբոտիչի մասին, որ իբր թէ նրա թեկնածութիւնը Պետական Դումայի անդամութեան համար վերցված է, սխալ է։ Թերթին միւս կողմից հաղորդում են, որ որոշ շրջաններում զբաղված են այն հարցով, թէ ինչ լեգալ միջոցներով հեռացնեն գեներալ Սուբբոտիչին ընտրութիւններին ժամանակցելուց։

✦ «Рѣчь» լրագիրը հաղորդում է, որ սեպտեմբերի 5-ին Պետերբուրգի սոց.-դեմօկրատ փոքրամասնականները խորհրդակցութիւն են ունեցել։ Համաքաղաքային կօնֆերենցիան բանւորական կուրիայի ընտրութիւնների հարցի վերաբերմամբ որոշել է հետևեալը. եթէ մի որևէ ժողովում հաճառութիւններից յետոյ խոշոր մեծամասնութիւնը կողմակից կը լինի բոյկոտին, այն ժամանակ սոց.-դեմօկրատները պէտք է ենթարկվեն այդ վճռին և միաժամանակ առանձին յայտարարութեամբ մատնանշել այդ վճռի ճշտակաթ հետևանքները։ Խորհրդակցութեանը ներկայ գտնվող կուսակցութեան կենտրօնական կոմիտէի ներկայացուցիչը նկատել է, որ այդ վճիռը հասկանում է համառուսական կօնֆերենցիայի որոշման։ Ներկայ եղողներից ոմանք մատնանշել են, որ այդպիսի վճիռներին բոյկոտարար-մեծամասնականները սոց.-յեղափոխականների աջակցութեամբ կարող են «ապարդիւն դարձնել ընտրութիւններին մասնակցելու որոշումը»։ Ժողովը այնուամենայնիւ ոչ մի որոշում չէ կայացրել, այլ կարծիք է յայտնել, որ պէտք է յանձնել այդ հարցերը նահանգական ընտրողական մասնաժողովին։

✦ «Рѣчь» լրագրին սեպտեմբերի 5-ին հեռագրում են Քիշինևից. «Լիազօրների ընտրութիւնները չը կայացան ամբողջ նահանգում ընտրողներ չը գալու պատճառով։ Ժողովներից մէկում ընտրողական ցուցակները կարդալիս երևաց, որ միայն Գանչեշտի վոլոստում ընտրողական ցուցակի մէջ մտցված են 50 հոգի, որոնք մեռած են մի քանի տասնեակ տարիներ առաջ, իսկ ընդհակառակը ներկայումս ընտրողական իրաւունք ունեցողներից շատերը չեն մտցված ցուցակների մէջ»։

## ԹՈՒՐՔ ԿԵԱՆՔԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

I

Այն օրից, երբ ազատագրական շարժումը ծնունդ առաւ Ռուսաստանում, երբ ճշնված, իրաւազուրկ ժողովրդի առաջ բացվեց ինքնագործունէութեան ասպարէզը, այն օրից, վերջապէս, երբ ռուսական կայսրութեան այլացեղ ու այլակրօն ժողովուրդների մասաւոր, բարոյական, կուլտուրական կեանքի շուրջը քաշված պարիսպները խարխլեցին, մեր հարևան մահմեդական հասարակութիւնը երևան բերեց գործունէութեան այնպիսի յատկութիւններ, որոնց մինչև այդ անընդունակ էին համարվում։ Թուրքը ստոր է կանգնած ցեղով։ Նա մօնղոլական է, մինք արիական, եւրոպական։ Թուրքը ստոր է կանգնած կրօնքով։ Նա մահմեդական է, մենք քրիստոնեայ։ Մահմեդականութիւնը սրով տարածված դաւանանք է։ Որպէս թէ միջին դարերում մղված զարհուրելի, ահեղ պատերազմները, բարձրացված խաչակիները, հաւատաքննական, ինկվիզիտորական սարսափները քրիստոնէութեան գործը չը լինէին և յանուն քրիստոնէութեան աւելի քիչ արիւն թափված լինէր, քան յանուն մահմեդականութեան։

Բայց այդ բոլորը սոփեստութիւններ էին ի հարկէ, քանի որ մենք հանդիսատես եղանք՝ թէ ինչպէս ոչ-եւրոպական մի ցեղ, եապօնականը, ոյժի, ըմբռնողութեան, իմացականութեան այնպիսի գերազանց յատկութիւններ ցոյց տուեց, որոնք դեռ մինչև այսօր էլ հիացման մէջ են ընկղմել ամբարտաւան «բարձր» ցեղերին։

Եւ ահա մենք այսօր հանդիսատես ենք լինում, թէ ինչպէս մեր արհամարհանքով նայած թուրքերը մտաւոր, կուլտուրական, հասարակական ահագին գործունէութիւն են ցոյց տալիս, թէ ինչպէս նրանք բաց են անում միմեանց եռևից այն հիմնարկութիւնները, որոնք մինչև այդ «բարձր, քրիստոնեայ» ցեղերին։

Ի միջի այլոց ասենք, որ մեր մնայարձութեան, մեծամտութեան սարերը, մեր «ազգասէրները» նոյնքան արհամարհանքով նայում էին և՛ մեր հարևան «տուտուց» վրացիների վրա, բայց իրականութիւնը պերճախօս կերպով ապացուցեց, թէ որքան գիտակից, որքան բարձր է վրացի ոչ միայն ինտելիգենցիան, այլ և հասարակ ժողովուրդը մեր ինտելիգենցիայից ու ժողովրդից։

Պէտք է միանգամ ընդ միշտ համոզվել, որ բարձր ու ստոր ցեղ չը կայ, որ բոլոր կրօնքները իրար արժեն։ Մի ժողովուրդ, որ հասարակութիւն արդիւնք է այն միջավայրի, այն արտաքին պայմանների, որոնց մէջ նա դրված է, որոնց մէջ նա ապրում է։

Թուրք ժողովուրդը ագէտ էր, անկուլտուրական, յետամնաց, որովհետև բռնակալ բիւրօկրատիան սանձ էր դրել առանձնապէս նրա ինքնագործունէութեան։ Մինչև դեռ մեզ թոյլատրված էր ունենալ մեր Հրատարակչական, Բարեգործական և այլն կուլտուրական ձեռնարկութիւններ, մինչև դեռ մեզ թոյլատրված էր պահել մեր սեփական լեզուով մամուլ, նոյն կառավարութիւնը, պաշտպան կանգնելով թուրք ժողովրդի «հայրերին»՝ բէկերին ու աղալարներին, ճնշում էր, զանազան արգելքներով կապոտում էր թուրք ժողովրդին, և այդ զոհերին կաշկանդված յանձնում էր իր բարի «հայրերի» ձեռքը։

Մեր կուլտուրական այլ և այլ հաստատութիւնների, մամուլի դիմաց թուրք միլիոնաւոր ազգաբնակութիւնը, Ռուսաստանում, միայն մի լրագիր ունէր, Ղրիմի «Թերջիմանը»։

Բայց այժմ, երբ կաշկանդման կապերը թուլացել են, թուրք ժողովուրդը Ռուսաստանում ծնունդ է տուել տասնեակներով օրգաններ, որոնց մէջ կան առաջադէմները, ինչպէս պահպանողականները։

Մենք կամենում ենք մատնանշել այդ օրգաններից մէկը, «Մօլլա-Նասրէդդինը», որ բաւական ժամանակ է ինչ լոյս է տեսնում Թիֆլիսում, Ջալալ Մէհմէդ Կուլի-զադէի խմբագրութեամբ։

«Մօլլա-Նասրէդդինը» իբրև երգիծաբանական-պատկերազարդ շաբաթաթերթ, կանգնած է իր բովանդակութեամբ և առաջադէմ ուղղութեամբ իր կոչման բարձրութեան վրա։ Նա արիաբար կռիւ է յայտարարել թուրք աղայականութեան ու հոգևորականութեան։ Եւ աչքի առաջ ունենալով այն անպատրաստ, նախապաշարված հասարակութիւնը, որի մէջ գործում է թուրք երգիծաբանական թերթը, կարելի է վստահօրէն հաստատել, որ յիշեալ շաբաթաթերթի խմբագիրն ու աշխատակիցները քաղաքացիական շատ աւելի մեծ արիութիւն ու առաքինութիւն են ցոյց տալիս։

Մեզ յայտնի է, որ «Մօլլա-Նասրէդդինի» հրատարակութեան առաջին օրերում խմբագրութիւնը պարտաւորված է եղել ծածուկ մնալ հասարակութիւնից, գաղտնի ճանապարհներով երթևեկել։ Բայց հետզհետէ նա նուաճել է ժողովրդի վստահութիւնն ու համակրութիւնը և այսօր նա ակներև աջողութիւն ունի։

Տ. Զաւէն

## ԽՕԼԵՐԱ

(հեռագիրներ)

ՏՕՄՍԿ։ Նովոնիկոլայեվսկում հիւանդացան 48 հոգի, մեռան 21-ը։ Նահանգում հիւանդացել են 60 հոգի, մեռել են 27-ը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Քաղաքը յայտարարված է խոլերայից անբարեյաջող։ Նահանգի զանազան տեղերում զէմստվոն կառուցել է 22 բարակներ։

ԿՕՍՏՐՕՄԱ, Քաղաքում խոլերա կայ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Կրկին հիւանդացան 3 հոգի, մեռան երկուսը։

ՍԱՐԱՏՕՎ։ Քաղաքում հիւանդացան 4 հ., գաւառում՝ 22 հոգի, մեռան 12-ը։

ՕՄՍԿ։ Քաղաքում խոլերա կայ։

ՍԱՄԱՐԱ։ Քաղաքում հիւանդացան կըրկին 5 հոգի, մեռան 3-ը։

ԿԱԶԱՆ։ Քաղաքում հիւանդացան 9 հոգի։ Նահանգում հիւանդութիւն չը կայ։

ՎԻԱԶՆԻԿԻ։ 4 հիւանդներից 2-ը մեռան։ Հիւանդացաւ կրկին 1-ը։

ՊԷՆԶԱ։ Քաղաքում գտնվեցին խոլերայով 2 հիւանդներ։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ Սեպտեմբերի 10-ին խոլերայից մեռան 2 եապօնացիներ։ Ինկօյում ուժեղ խոլերա կայ. մեռնում են նաև ժանտախտից։

## ԲԱԳՈՒԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

II

Գործատէրն ու բանւորը երկու ախոյեան ոյժեր են՝ անողոք ճակատագրի կամքով շաղկապված իրար հետ, բայց միշտ ներհակ իրանց ձգտումներով ու շահերով։

Բանւորը շարունակում է իր կռիւը գործարանատիրոջ շահագործութեան դէմ, իր մտաւորական վիճակը բարւոքելու նպատակով։

Եւ երբ չը կայ դատաւոր, այդ ախոյեան ոյժերը, թողնված իրանց կամքին, կը կռուեն այնքան, մինչև որ ուժասպառ կը լինեն երկուսն էլ, մինչև որ կընկնի մէկն ու մէկը պարտված։

Մի բան, որ ձեռնտու չէ կողմերից և ոչ մէկին, ֆլասում է ընդհանուր շահերին։

Նոյն դրաման այսօր կատարվում է Բաքուում։

Շատ ֆիրմաներում արդէն անցել է կրիզիսը փոխադարձ զիջումներով, մի քանի տեղ դեռ ևս շարունակվում է, իսկ տեղ-տեղ էլ ժամանակաւոր լուութիւնը խախտվում է չիրագործված խոստումների պատճառով։

Այս բոպէիս գործադուլ է «Կասպիական Ընկերութեան» ֆիրմայում։

Օգոստոսի 10-ին, նրա Բիբի-Էյբաթի, Բալախանիի և Սև-քաղաքի բանւորները, թւով 2000 հոգի, միահամուռ կերպով 30 կէտերից բաղկացած պահանջներ առաջադրեցին վարչութեանը, 3 օր ժամանակ տալով մտածելու համար։ Որովհետև վարչութիւնը վճռականապէս մերժեց կատարել այդ պահանջները, բանւորները գործադուլ յայտարարեցին։ Երեք օրից յետոյ՝ գործի չը դուրս գալու պատճառով, գոյութիւն ունեցող կանոնների հիման վրա, բանւորները յայտարարվեցին արձակված։ Բանւորները չը վերցրին հաշիւները և շարունակում են գործադուլը։

Նոյն դրութեան մէջ է և Տէր-Ակօպովի ֆիրման Բալախանիում։ Այնտեղ յուլիսի 28-ին բանւորները գործադուլ արեցին և պահանջեցին նախ՝ տալ իւրաքանչիւրին իր կէս տարվայ ռոճկի 60%-ը պարգև, ապա, կարծես, այդ տարօրինակ ծայրայեղ պահանջը մեղմելու նպատակով՝ առաջադրեցին 18 կէտից բաղկացած պահանջներ։ Ֆիրման 60%-ի փոխարէն խոստացաւ տալ 30% միայն, իսկ միւս պահանջներին մինչև այժմ էլ չէ պատասխանում և գործադուլը շարունակվում է։

Օգոստոսի 29-ին 39 կէտից բաղկացած պահանջներ առաջադրեցին Շամսի Ասադուլայեվի նաւթահանքի ու Սև-քաղաքի բանւորները և 30-ին գործադուլ արեցին։ Նաւթահանքում յայտարարութիւն էր կախված, որ նրանք, որոնք գործի չեն դուրս գայ մինչև սեպտեմբերի 5-ը, համարվում են արձակված։

Այնուհետև հերթը հասաւ Փիթօյեվների ֆիրմային, որի բանւորների ու արհեստաւորների մէջ չը նայելով որ փոխադարձ համաձայնութիւն էր կայացել դեռ ևս գարնանը, այնուամենայնիւ բանւորները նորից են պահանջներ առաջադրել և պատասխանի համար ժամանակամիջոց նշանակել մինչև սեպտեմբերի 10-ը։

Եւ ով գիտէ, գուցէ մի քանի օրից յետոյ էլ նոյն բաղդին կրկին անգամ կարժանանայ Մանթաշեանի ֆիրման։ Իսկ յետոյ էլ ուրիշները, որոնց մօտ նոյնպէս՝ վերջին չքաւորութեան ու կարօտութեան դուռը հասած հայկական գիւղերի աշխատող ձեռքերը, այս փորձութեան ծանր տարիները, դեռ ևս հնարաւորութիւն ու յոյս ունեն աշխատանք գտնելու և իրանց ծով կարիքները հոգալու։

Եւ այդպէս անվերջ...

Իսկ վերջին ժամանակներս նկատվում է մի նոր ուշագրաւ երևոյթ ևս։ Դա իտալական գործադուլն է, որի մի քանի փորձերը արդէն տեղի են ունեցել Բալախանիում։

Ինչպէս յայտնի է, իտալական գործադուլը զայրանում է նրանում, որ բանւորները գործադուլ չեն անում, բայց և կանոնաւոր չեն էլ աշխատում։ Նրանք կատարում են, մօտաւորապէս, նոյնքան աշխատանք, որքան վարձատրութիւն ստանում են գործատէրերից, այսինքն չեն ուզում յաւելեալ արժէք կամ օգուտ տալ կապիտալիստին։ Եթէ օրինակ, տարտայլչիկը սովորաբար 5—6 բոպէում հանում է մի ժելօնկա նաւթ, իտալական գործադուլի դէպքում կէս ժամում հանում է մի ժելօնկա, և այլն։

Այդպիսով՝ արդիւնաբերողների վնասը չափազանց զգալի է ու ակներև։ Բազուի արդիւնաբերութեան մէջ, եթէ չեմ սխալվում, իտալական գործադուլը առաջին անգամ գործադրվել է «Մասիս» ընկերութեան ֆիրմայում, իսկ նրանից յետոյ Միրզօյեվի V-րդ նաւթահանքում, որտեղ բանւորները աւագ գործակատարին դուրս են տարել հանքից տաչկայի վրա լոկ այն պատճառով, որ, անկարող լինելով տանել բանւորների տարօրինակ վարմունքը, նա համարձակվել է նկատել։

Բայց այդ ամենայնիւ, գործատէրերը, ինչպէս ասեցինք, ստիպված են եղել դիմել զանազան միջոցների՝ ֆիրմաները գործի դնելու համար։ Նրանց մէջ մի քանիսը, ինչպէս ասեցինք, «Կասպիական Ընկերութեան» ֆիրմայում։ Օգոստոսի 10-ին, նրա Բիբի-Էյբաթի, Բալախանիի և Սև-քաղաքի բանւորները, թւով 2000 հոգի, միահամուռ կերպով 30 կէտերից բաղկացած պահանջներ առաջադրեցին վարչութեանը, 3 օր ժամանակ տալով մտածելու համար։ Որովհետև վարչութիւնը վճռականապէս մերժեց կատարել այդ պահանջները, բանւորները գործադուլ յայտարարեցին։ Երեք օրից յետոյ՝ գործի չը դուրս գալու պատճառով, գոյութիւն ունեցող կանոնների հիման վրա, բանւորները յայտարարվեցին արձակված։ Բանւորները չը վերցրին հաշիւները և շարունակում են գործադուլը։

Նոյն դրութեան մէջ է և Տէր-Ակօպովի ֆիրման Բալախանիում։ Այնտեղ յուլիսի 28-ին բանւորները գործադուլ արեցին և պահանջեցին նախ՝ տալ իւրաքանչիւրին իր կէս տարվայ ռոճկի 60%-ը պարգև, ապա, կարծես, այդ տարօրինակ ծայրայեղ պահանջը մեղմելու նպատակով՝ առաջադրեցին 18 կէտից բաղկացած պահանջներ։ Ֆիրման 60%-ի փոխարէն խոստացաւ տալ 30% միայն, իսկ միւս պահանջներին մինչև այժմ էլ չէ պատասխանում և գործադուլը շարունակվում է։

Օգոստոսի 29-ին 39 կէտից բաղկացած պահանջներ առաջադրեցին Շամսի Ասադուլայեվի նաւթահանքի ու Սև-քաղաքի բանւորները և 30-ին գործադուլ արեցին։ Նաւթահանքում յայտարարութիւն էր կախված, որ նրանք, որոնք գործի չեն դուրս գայ մինչև սեպտեմբերի 5-ը, համարվում են արձակված։

Այնուհետև հերթը հասաւ Փիթօյեվների ֆիրմային, որի բանւորների ու արհեստաւորների մէջ չը նայելով որ փոխադարձ համաձայնութիւն էր կայացել դեռ ևս գարնանը, այնուամենայնիւ բանւորները նորից են պահանջներ առաջադրել և պատասխանի համար ժամանակամիջոց նշանակել մինչև սեպտեմբերի 10-ը։

Եւ ով գիտէ, գուցէ մի քանի օրից յետոյ էլ նոյն բաղդին կրկին անգամ կարժանանայ Մանթաշեանի ֆիրման։ Իսկ յետոյ էլ ուրիշները, որոնց մօտ նոյնպէս՝ վերջին չքաւորութեան ու կարօտութեան դուռը հասած հայկական գիւղերի աշխատող ձեռքերը, այս փորձութեան ծանր տարիները, դեռ ևս հնարաւորութիւն ու յոյս ունեն աշխատանք գտնելու և իրանց ծով կարիքները հոգալու։

Եւ այդպէս անվերջ...

Իսկ վերջին ժամանակներս նկատվում է մի նոր ուշագրաւ երևոյթ ևս։ Դա իտալական գործադուլն է, որի մի քանի փորձերը արդէն տեղի են ունեցել Բալախանիում։

Ինչպէս յայտնի է, իտալական գործադուլը զայրանում է նրանում, որ բանւորները գործադուլ չեն անում, բայց և կանոնաւոր չեն էլ աշխատում։ Նրանք կատարում են, մօտաւորապէս, նոյնքան աշխատանք, որքան վարձատրութիւն ստանում են գործատէրերից, այսինքն չեն ուզում յաւելեալ արժէք կամ օգուտ տալ կապիտալիստին։ Եթէ օրինակ, տարտայլչիկը սովորաբար 5—6 բոպէում հանում է մի ժելօնկա նաւթ, իտալական գործադուլի դէպքում կէս ժամում հանում է մի ժելօնկա, և այլն։

Այդպիսով՝ արդիւնաբերողների վնասը չափազանց զգալի է ու ակներև։ Բազուի արդիւնաբերութեան մէջ, եթէ չեմ սխալվում, իտալական գործադուլը առաջին անգամ գործադրվել է «Մասիս» ընկերութեան ֆիրմայում, իսկ նրանից յետոյ Միրզօյեվի V-րդ նաւթահանքում, որտեղ բանւորները աւագ գործակատարին դուրս են տարել հանքից տաչկայի վրա լոկ այն պատճառով, որ, անկարող լինելով տանել բանւորների տարօրինակ վարմունքը, նա համարձակվել է նկատել։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ

Կահիրէ, 8 սեպտեմբերի

«Մշակին» վերերմանը կը սպասենք անհամբեր, «խարրիկ» մը ստանալու համար Կովկասահայ կեանքէն, որմէն կտրուած կը մնանք ամիսներէ ի վեր։ Այս ժամանակամիջոցին, այստեղ մամուլին մէջ հազիւ թէ քանի մը տող տեղեկութիւն կարդացուեցաւ Կովկասի կեանքէն, որ մեզի չափազանց օրէն կը շահագրգռէ։ Կարծեմ թէ ձեր կողմերն ալ շատ բաներ մը իմացած ըլլալու չէք ասանդուանքը անցած-դարձածներէն։ Տեղական խնդիրները ամէնքն ալ հաւասապէս շահեկանութիւն չեն կրնար ներկայացնել «Մշակին» ընթերցողներուն, ուստի նորողականութեամբ կը խօսինք այն գործերուն վրայ, որոնք ընդհանրականութեան մը գամանք մը կրնեն ներկայացնեն։ Այսպէս, բանադատ պահանջմամբ եղած դրամաշորթական գործառնութիւնները։

—

Օգոստոս ամսուն սկիզբները Կահիրէ սպառնալից երկու նամակ հասած էր երկու հայու, որոնք ունեոր դասակարգին կը պատկանին։ Մէկը՝ Պետրոս Էֆէնդի Կարապետեան, միւսը՝ Մկրտիչ Էֆէնդի Անդրանիկեան։ Առաջինէն կը պահանջուէր չորս հարիւր հազար բուբլի (400,000), երկրորդէն՝ յիսուն հազար բուբլի (50,000)։ Դիւրութեամբ հասկցնելու համար, ֆրանկները, անգլիական ոսկիները ռուսական դրամի կը վերածեմ, մօտաւոր արժէքով մը։ Այդ նամակները կը յանձնուին ոստիկանութեան, ու քննութիւն մը կը բացուի։ Ինչ որ լսեցի, Կարապետեան էֆէնդիին խրկուած նամակը Ամերիկայէն պօսթան ձգուած է. իսկ Անդրանիկեան էֆէնդիինը Բուլգարիարէն։ Զուգադիպութեամբ մը, որ շատ դիւրահասկնալի է, երկու նամակները իրենց հասցէներուն ժամանելէն անմիջապէս ետքը, Նիւ-Եօրքէն Թաւշանճեանին սպանման լուրը կը հասնի։ Ինչպէս անշուշտ իմացած էք, պօլսեցի այդ հարուստ վաճառականէն հին-վերակազմեալները երկու տարի առաջ մեծկակ գումար մը պահանջած ըլլալով, ինչպէս ուրիշ հարուստներէ ևս, մերժողական պատասխանին համար հիմա սարսափ սկսած են տարածել։

Այդ սպանման և Կահիրէ հասած սպառնական նամակներուն միջև սերտ առընչութիւն տեսնելը ամենաբնական մտածմունք մըն էր. մանաւանդ որ մօտաւոր նախընթաց մը յիշելով, այլևս տարակոյսի տեղի չէր մնար։ Երբ այդ չարագործները 1905-ին Պոլիս Արիկ Ունճեանը սպաննեցին, նոյն օրը իսկ թղթատան նամակներ յանձնեցին, Եգիպտոս ունեոր անձնաւորութեանց ուղղուած, որոնք միևնոյն պահուն կիմանային Պոլսոյ եղեռնագործութիւնը և իրենցմէն ալ դրամական պահանջումը սպառնալիքով։

Սակայն, այս հեղուան սպառնագրերը այլևս վերակազմեալներու կնիքը չէին կրեր։ Կեղծիք մը՝ որուն շարժառիթը դիւրին էր բացատրել։ Երբ 1905-ին սպառնական նամակները Պոլսէն այստեղ հասան, ոստիկանութիւնը բոլոր վերակազմեալները կանչելով անոնց խմացուց թէ՝ ամենքն ալ հաւասարապէս պատասխանատու պիտի բռնուին, եթէ ոևէ դէպք պատահելու ըլլար։ Վերակազմեալները պատասխանեցին, թէ իրենք այդ գործին մէջ ոևէ մասնակցութիւն չունին, ու Պոլսոյ մասնաճիւղին կնիքը կրող սպառնական նամակներուն պատասխանատուութիւնը իրենց վրա չի կրնար ծանրանալ։ Բայց ոստիկանութիւնը չուզեց ասանկ նրբածութիւններ լսել։

— Դուք ամենքդ ալ միևնոյն ընկերութեան անդամները չէք, — հարցուց։

— Այո, — պատասխանեցին։

— Ուրեմն, ամենքդ ալ համերաշխ էք կամ մէկ-մէկու համար պատասխանատու։

Այս սպառնալիքը ահարեկիչ ազդեցութիւն ունեցաւ։ Եգիպտոս որքան որ ալ անգլիական թեւարկութեան ներքև ազատութիւն վայելող երկիր մըն է, բայց և այնպէս արևելեան երկիր մըն ալ է, ուր արդարադատութիւնը յաճախ քաղաքական պահանջումներուն տրամադրութեանը ներքև կը դրուի։ Դէնշավիի դէպքը պերճախօս ապացոյց մը եղած էր այս անհարքելի ճշմարտութեան։ Շատ չըներ, Եգիպտոս ֆելլահներու գեղը անգլիացի մը սպաննուեցաւ, ու անգլիական արդարադատութիւնը (??), փոխանակ յանցաւորը կամ յանցաւորները գտնելու, այնպիսի վայրենամիտ տնօրէնութիւններ ըրաւ, որ ամբողջ Եգիպտոս սարսռաց ճամ։ Ահարեկումը տարածուեցաւ ամէն քաղաք և գիւղ. ասկէ ետև ալ եթէ կուգեն թող եւրօպացիի մը մատ դպցնեն։

Այս իրողութիւնները սարսափեցուցին վերակազմեալները, որոնցմէ շատերը արդարև տեղեկութիւն չունէին այդ սպառնալիքներէն ու բնաւ չէին կրնար համակարծիք գտնուիլ բռնի դրամապահանջման դրութեան։ Իրենց պետերուն խաղին զոհ պիտի երթային։ Կռիւը մէջերնին այդ օրէն սկսաւ արդէն։ Ինչ և է, շնորհիւ ոստիկանական խիստ սպառնալիքներուն, վերակները այստեղ ոչ ոքի մազին կրցան դպչիլ, ու գրեթէ ոչ ոք ալ բան մը ցնծաց։ Անցեալ տարի միայն եղաւ որ, այլ և այլ միջոցներով, կարողացան քիչ մը բան ձեռք անցընել։

Խրատուելով այս անցեալէն, վերակազմեալ պետերը այս տարի ուրիշ հնարք մը մտածեցին։ Որոշեցին որ սպառնական նամակներուն ներքև իրենց կնիքները չդնեն, և ոչ ալ մէջը իրենց անունները յիշատակեն։ Բայց ոևէ հայ, այդ նամակը երբ ստանայ, առանց վարանումի կը կռահէ, թէ՝ որոնցմէ խրկուած է, ուստի եթէ իր կաշուն փրկութիւնը կուզէ, կերթայ վերակազմեալ պետերը կը գտնէ և անոնց հետ կը յարմարի, այսինքն՝ զեղջ մը ընել տալով, ուզածնին կուտայ։ Իսկ եթէ սպառնագիր ստացողները այդ խոհեմութիւնը չունենան ու սպաննուին, կառավարութիւնը չի կըրնար միայն պատժելու, այնպիսի վայրենամիտ տնօրէնութիւններ ըրաւ, որ ամբողջ Եգիպտոս սարսռաց ճամ։ Ահարեկումը տարածուեցաւ ամէն քաղաք և գիւղ. ասկէ ետև ալ եթէ կուգեն թող եւրօպացիի մը մատ դպցնեն։

Այս իրողութիւնները սարսափեցուցին վերակազմեալները, որոնցմէ շատերը արդարև տեղեկութիւն չունէին այդ սպառնալիքներէն ու բնաւ չէին կրնար համակարծիք գտնուիլ բռնի դրամապահանջման դրութեան։ Իրենց պետերուն խաղին զոհ պիտի երթային։ Կռիւը մէջերնին այդ օրէն սկսաւ արդէն։ Ինչ և է, շնորհիւ ոստիկանական խիստ սպառնալիքներուն, վերակները այստեղ ոչ ոքի մազին կրցան դպչիլ, ու գրեթէ ոչ ոք ալ բան մը ցնծաց։ Անցեալ տարի միայն եղաւ որ, այլ և այլ միջոցներով, կարողացան քիչ մը բան ձեռք անցընել։

Խրատուելով այս անցեալէն, վերակազմեալ պետերը այս տարի ուրիշ հնարք մը մտածեցին։ Որոշեցին որ սպառնական նամակներուն ներքև իրենց կնիքները չդնեն, և ոչ ալ մէջը իրենց անունները յիշատակեն։ Բայց ոևէ հայ, այդ նամակը երբ ստանայ, առանց վարանումի կը կռահէ, թէ՝ որոնցմէ խրկուած է, ուստի եթէ իր կաշուն փրկութիւնը կուզէ, կերթայ վերակազմեալ պետերը կը գտնէ և անոնց հետ կը յարմարի, այսինքն՝ զեղջ մը ընել տալով, ուզածնին կուտայ։ Իսկ եթէ սպառնագիր ստացողները այդ խոհեմութիւնը չունենան ու սպաննուին, կառավարութիւնը չի կըրնար վերակներուն օգնիքէն բռնել։ Նմանապէս, ոստիկանութիւնը իրաւունք չունենար ոևէ վերակի դէմ շարժուիլ, եթէ սպառնագրերը ոստիկանատուն յանձնուին։

Բայց այս բոլոր տղայամիտ հաշիւները օդը ցնդեցան։ Պ. Կարապետեանի և պ. Անդրանիկեանի խրկուած սպառնագրերուն առթիւ, ոստիկանութիւնը վերսին կանչեց հին-վերակազմեալներուն պետերը։ Գիտնալու էք որ հնչակեան-վերակները վերջերս երկու մասի բաժնուեցան. մէկը՝ հնա-վերակեաններ, որոնք Ամերիկա «Ձայն Հայրենեաց»-ն ու խալպ-«Հնչակ» մը կը հրատարակեն, և՝ Եգիպտոս ալ «Ազատ-բեմ»-ը. մարդասպանութեամբ դրամ շարթողները ասոնք են։ Իսկ միւսը, որ նորա-վերակ կը ճանչնամ, Ամերիկա «Ազգ» շաբաթաթերթը կը հրատարակէ։

Խնդրի առարկան հիմա հին-վերակներն են, որոնց պետերը ոստիկանատուն կանչեցան։ Ասոնք պատասխանեցին, թէ՝ սպառնագրերը իրենց կուսակցութեան կնիքը չկրելով, իրենք չեն կրնար պատասխանատուութեան ներքև մնալ եթէ մարդ

—Այդպիսի բան չէ կարելի, կամ աշխատեցէք և կամ գործադուլ արէք ու դուրս վորեք այստեղից։

Բանուորները, ի հարկէ, ստացան իրանց պահանջը։

Բայց այսօր միևնոյն Միրզոյեվի բանուորները, ինչպէս մեզ ասացին, ներկայացրել են նոր պահանջներ—երեք կէտից բաղկացած։

Այդ տեսակ գործադուլի երրորդ դէպքը արել են քաղաքում, քաղաքային դումայի քուֆէյտի ծառայողներն և։

Հաւանականօրէն իտալական գործադուլը աւելի լայն չափեր կը ստանայ, քանի որ բանուորը չէ տուժում դրանից և խուսափում է ոստիկանական անախորժ միջամտութիւնից։

Ո՞վ կարող է հաճոյք զգալ, տեսնելով թէ ինչպէս կրկնապատկվում է քաղցած բազմութեան տառապանքը և աճում գործազուրկների բանակը։

Ո՞վ է բանուորութեանը դրդում շեղվել իր բնական շաւղից, վտանգաւոր խաղերի հետամուտ լինել, անել անկարելին—թռչել միանգամից բազմաստիճան սանդուղքների գլուխը, մինչդեռ կարելի է բարձրանալ անվտանգ և հասնել նոյն կատարին սանդուղքների վրայով։

Դիտող

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

—

◆ Քաղաքային վարչութիւնը ուղարկել է 3-րդ, 4-րդ, 5-րդ և 9-րդ քաղաքամասի պրիստաւներին Թիֆլիս քաղաքի 2-րդ բաժանմունքի ընտրողական թերթիկները։ 3-րդ քաղաքամասին՝ 918 թերթիկ, 4-րդ՝ 1447, 5-րդ՝ 2975 և 9-րդ՝ 3437։ Վարչութիւնը խնդրել է վերադարձնել այն թերթիկները, որոնց սեփականատէրերը չեն գտնվի։

◆ Սեպտեմբերի 14-ին տեղի են ունեցել լիազօրական ընտրութիւններ բոլոր ֆաբրիկների և գործարանների բանուորական կուրիաներում։

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Բագու, սեպտեմբերի 10-ին.—«Մշակ»-ի № 100-ում զետեղված լուրը, որ Շուշու թեմական դպրոցի բարձր դասարանները, շնորհիւ հոգաբարձութեան թոյլ կազմի, փակված են և աշակերտները փողոց նետված, որ հայ հասարակութիւնը անտարբեր է և որ աշակերտները օտար քաղաքների դպրոցների շէմքերն են մաշում, խորը խոցեց մեր՝ քաղաքական զարաթաղցիներիս սիրտը և մեծ ցաւ պատճառեց։ Մենք վաղուց գիտէինք, որ անցեալ տարվայ մութ ոյժի բռնութեան տակ ընտրված պարոնները այդ օրին են ածելու մեր միակ պարծանք դպրանոցը։ Մենք դեռ անցեալ ուսումնական տարվայ վերջերում Աշոտ եպիսկոպոսին առատ նուէրատուութեամբ վերադարձրինք Շուշի, որ չը վանգվի դրպրանոցը, բայց ի ցաւ սիրտ՝ այդ տասնեակ ռուբլի նուէրների համար հաշիւ չը ստացանք, մինչդեռ իրաքանչիւր պարտաճանաչ մարդու պարտքն էր այդ անելու։ Այժմ մենք հարկից ստիպված խնդրում ենք Աշոտ եպիսկոպոսին, թող նա բարի լինի հաշիւ տալու թէ՝ ումից որքան է ստացել, որքան ծախսել ինչ դէպքի համար և որտեղ են այդ գումարները, կամ ինչով է զբաղված ինքը, որ մեր ուսումնարանի աշակերտները Երևանի փողոցներն են չափչփում։

Շուշեցի

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Երկուշաբթի, մեռելոցի տօնի պատճառով, «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնի չորեքշաբթի, ամսիս 19-ին։

◆ Ուրբաթ, ամսիս 14-ին, տեղի ունեցաւ Կովկասագիտական կուրսերում պ. Ստեփան Մալխասեանի առաջին դասախօսութիւնը։ Դասախօսութեան նիւթն էր՝ հայերի քրիստոնէութիւն ընդունելը, կապաշա հայ ժողովրդի թշնամական վերաբերմունքը և դէպի նոր վարդապետութիւնը, և առաւել նրա արտօնված դրութեան մէջ գտնվող ծառայողները, այն վճռական ազդեցութիւնը, որ ունեցաւ հայ առաքելի գիւտը, որով հնարաւոր եղաւ և՛ քրիստոնէութեան յաղթանակը, և՛ ընդհանուր ազգային գիտակցութեան զարգացումը։ հոգևորականութեան ջերմ մասնակցութիւնը գրականութեան սկզբնաւորութեան օրից և այն հոգևոր-պատմական ուղղութիւնը, որ նա դրոշմեց մեր ճակատին մինչև XIX-րդ դարի սկիզբը։ Դասախօսի գեղեցիկ լեզուով կարդացածին մեծ ուշադրութեամբ լսում էր բազմաթիւ հասարակութիւնը։ Աւելի մանրամասնօրէն մենք կը խօսենք առաջիկայում։

◆ Երէկ, շաբաթ, երեկոյեան ժամը 6-ին Բ. Խալաթեան, անցնելով իր դասախօսութեանց ծրագրի երրորդ բաժնին, կարդաց հետևեալ նիւթերի մասին. «Հայեր և Արմենք։ Հայերի ապատամբութիւնը Դարեհ Վշտասպեանի դէմ։ Հայ ժողովրդական ասանդութիւնները և Մովսէս Խորենացին. նրա պատմութեան աղբիւրները։ Հայկ դիւցազն. նրա բարոյական տիպարը. նրա ասանդութեան սկզբնական սերմը»։ Իսկ վաղը, երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ին Բ. Խալաթեանի դասախօսութեան նիւթը լինելու է՝ «Արամ. Արայ և Շամիրամ. Տիգրան Մեծն և Աժդահակ. այս ասանդութիւնների աղբիւրները»։

◆ Այսօր Էջմիածնից վերադառնում է Սաքսոնիայի արքայազն արքատ Մորիցը։

◆ Սեպտեմբերի 14-ին, երեկոյեան ժամը 8-ին, վեց զինված չարագործներ մտնում են Միքայէլեան փողոցի վրա իր սեփական տան մէջ ապրող պաշտօնաթող գեներալ-մայոր Միքայէլ Դօլուխանեանի բնակարանը, նախապէս կտրելով հեռախօսի լարերը, և փող են պահանջում Դօլուխանեանից։ Մերժումն ստանալով, չարագործներից մէկը ատրճանակի կոթով հարուածում է գեներալին քունքից։ Գեներալի բարձրացրած աղմուկը վրա ներս են վազում զինուոր ծառաները. այդ ժամանակ չարագործները ըսկըսում են փախչել, բայց նրանցից երկուսին բռնում են ծառաներն ու վրա հասնող օֆիցէրները։ Կալանաւորվածները Քութայիսի նահանգի Բաչինեան գաւառի բնակիչներ են, Իլիա Կերեսելէշվիլի և Դմիտրի Լոմիտաձէ անունով, որոնց անմիջապէս ուղարկում են կօմենդանտի վարչութիւնը։ Բռնվածների մօտ գտել են երկու ատրճանակ և մի դաղոյն։ Գեներալ Դօլուխանովին անմիջապէս բժշկական օգնութիւն են հասցրել։

◆ Այս համարից սկսում ենք տպագրել մեր տաղանդաւոր աշխատակից ***-ի Թղթակցութիւնները Եգիպտոսից «Հայ կեանքէն» վերնագրով։

◆ Մեր բաժանորդներից շատերը իրանց մեծ գոհութիւնն են յայտնում, որ «Մշակի» խմբագրութիւնը ջանքեր է անում Թիւրքաց Հայաստանում տեղի ունեցող դէպքերի մասին իսկական նկարագիր տալ։ Պարտք ենք համարում յայտնել, որ մենք սկսել ենք կանոնաւորապէս ստանալ Թղթակցութիւններ Հայաստանից, խիստ շահագրգիռ. այդ Թղթակցութիւնները գրված են վստահելի և անկողմնապահ անձանց ձեռքով և մեծ լոյս են սփռում բազմաչարչար մայր-հայրենիքի վիճակի վրա։ Կաշխատենք հետզհետէ տպել։

◆ Սեպտեմբերի 13-ին կալանաւորված է Մարտիրոս Խաչիկեանը, որը օգոստոսի 27-ին սպանել էր Տէր-Միքայէլեանցին։

◆ Սեպտեմբերի 13-ին, երեկոյեան ժամը 7-ին, Ռօզօվայա փողոցում Նիկօլայ Շէնգելի տան դարպասի առաջ ատրճանակի մի քանի գնդակներով վիրաւորվել է 7-րդ քաղաքամասի աւագ գօրգօղօլոյ Միրոն Պակոշինը։ Օգնութեան հասնող ոստիկանները հետապնդում են չարագործներին, որոնք փախչում են և մտնում Սէմեօն Սիլիանովի թէյատունը։ Կասկածը ընկնում է այնտեղ գտնվող Թիֆլիսեցի Ներսէս Խաչատրեանի, Լևոն Յարութիւնեանի և Նիկօլայ Միրելաշվիլիի վրա, որոնց և կալանաւորում են։ Վիրաւորը անմիջապէս տարվում է Միքայէլեան հիւանդանոցը։

◆ Այսօր Զուբալովի ժողովրդական տան մէջ կայանալու է համերգ գրականական բաժնով։ Կը մասնակցեն ա.ա. Գրիշչենկօ, Զասլավսկայա, Մայսուրեան, Սիմալլիցկայա, պ.պ. Տօմաշեվիչ, Մելենչուկ, Պեալիչինի և Տէր-Աստուրեան։ Սկիզբն է առաւօտեան ժամը 11½-ին։

◆ Սանիտարական մասնաժողովը որոշում է կայացրել առաջարկել վարչութեանը, որպէսզի նա պարտաւորեցնէ տանտէրերին կանալիզացիա անցկացնելու իրանց տներում։

◆ «Бак. Эхо» լրագիրը հաղորդում է, որ սեպտեմբերի 11-ին, ցերեկվայ ժամը 1 և 10 րոպէին, ատրճանակներով զինված 4 երիտասարդներ մտնում են Թաղիեվի պասաժում գտնվող Արտաւր Շուբերտի մագազինը և, հրամայելով ֆիրմայի կառավարիչ Վիլհելմ Լեմանտին ու գործակատարներին ձեռքերը վեր բարձրացնել և տեղից չը շարժվել, կողոպտում են կասսայում գտնվող 90 ռուբլի գումարը։ Ապա հրամայելով 5 բոպէի ընթացքում դուրս չը գալ մագազինից, կողոպտիչները դուրս են գալիս և անյայտանում։ Լեմանտիի ասելով, մի շաբաթ առաջ մի ինչ որ անյայտ մարդ Շուբերտի անունով բերում է մի նամակ՝ պահանջելով 1500 ռուբլի վճարել։ Կողոպտիչները բոլորն էլ երիտասարդներ էին, որոնցից երեքը ծածկել էին փուրաժկաներ, իսկ մէկը՝ մորթէ փափախ։

◆ Բագուի քաղաքային վարչութիւնը խօլերայի դէմ մաքառելու համար ժամանակաւորապէս քաղաքային ծառայութեան էր ընդունում բժիշկներ։ Խնդրատուների թիւը հասել է 100-ի, որոնցից ընդունվել են միայն 7 հոգի։ Չը նայելով որ ընդունելութիւնը վերջացել է արդէն, այնուամենայնիւ խնդիրքները շարունակվում են դեռ ստացվել։

◆ «Бак. Эхо» լրագրին հաղորդում են, որ վլադիկավկազեան երկաթուղու վարչութիւնը տեղեկացրել է ի գիտութիւն ռուսական երկաթուղային բոլոր գծերում աշխատանք որոնողներին յայտարարելու, որ ներկայումս երկաթուղու վարչութիւնը ստացել է 5,000 խնդիրքներ, որոնք տեղ չը լինելու պատճառով թողնված են անհետևանք։

◆ Սեպտեմբերի 14-ին Նիկօլայեվսկայա հրապարակի վրա յանկարծամահ եղաւ Թէլաւի բնակիչ Փիրուզ Եաղուբովը։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Սեպտեմբերի 13-ի ցերեկվայ ժամի 2-ին երդուեալ-հաւատարմատարի օգնական Սերգէյ Դանգուրովի բնակարանից, որը գտնվում է Ելիզավետինսկայա փողոցի վրա, անյայտ չարագործներ բանալով դուռը ներս են մտել և գողացել զանազան իրեղէններ 235 ռուբլու արժողութեամբ։

—

Սեպտեմբերի 13-ի երեկոյեան ժամի 9-ին Կրասնոգօրսկայա փողոցում ապրող պարսկահպատակ Ալի-Ռուսէին Ալեկեր-օղլու բնակարանն են մտնում երեք անծանօթներ, որոնցից մէկը սպիտակ տաւարի հագած, սրով և ատրճանակով, միւսը լեզգի թիկնապահի զգեստով, դաշոյնով և ատրճանակով, իսկ երրորդը սև տաւարկայով, ցիլինդրաւոր, և իրանց ոստիկանական պաշտօնեաներ անունելով, խուզարկութիւն կատարում։ Խուզարկութեան ժամանակ լեզգին Ալեկերի որդու՝ Ալեկպերի զրպանից հանում է 220 ռուբլի թղթադրամներ, որից յետոյ երեք չարագործներն էլ անյայտանում են։

—

Երկրորդ գիմնազիայի ուսուցիչ Տատիեվի բնակարանից անյայտ չարագործներ տարել են զանազան իրեր 186 ռուբլի արժողութեամբ։

—

Սեպտեմբերի 14-ին Սաավրօպոլի նահանգի ընակիչ Նատալիա Լամակեան յայտնել է 9-րդ մասի պրիստաւին, որ սեպտեմբերի 13-ի երեկոյեան ժամի 8-ին Ռնատօնիէվսկայա փողոցով անցնող իր Ալէքսանդր որդուն կանգնեցնում է Թիֆլիսի քաղաքացի Իլիա Բերուրովը և սաստ առաջարկութիւն անում։ Մերժումն ստանալով՝ Բերուրովը ֆիզական դանակով վիրաւորում է աղջկան երեք տեղից՝ աջ կողքից, աջ ոտից և մէջքից և ապա անյայտանում է։ Վիրաւորը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց, իսկ Բերուրովին կալանաւորելու համար միջոցներ են ձեռք առնված։

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Ներկայումս Մարիինսկի պալատում եռանդուն աշխատանքներ են կատարվում։ «Рѣчь» լրագրի ասելով յարմարեցնում են նրան Պետական Խորհրդի նիստերի համար։ Աշխատանքները պէտք է վերջանան մինչև հոկտեմբերի 10-ը։

◆ Այն տարածված լուրը թէ՝ 2-րդ Պետական Դումայի սոց.-դեմօկրատական ֆրակցիայի անդամների գործը քննվելու է բարձրագոյն դատարանով, այժմ «Товарищъ» լրագիրը անհիմն է համարում։ Ինչպէս հաղորդել էր «Рѣчь» լրագիրը, նրանց դատելու են սովորական կարգով։

◆ Լուրեր են պատում մինիստրական կարգադրութիւնում տեղի ունենալիք փոփոխութիւնների մասին։ Ասում են, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր սենատոր Կաուֆմանը և երկրագործութեան մինիստր իշ. Վասիլչիկովը շուտով հրաժարական են տալու։

◆ Օդեսայից «Рѣчь» լրագրին հեռագրում են, որ ուսումնարանական շրջաններում խօսում են թէ՝ Օդեսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Մուսին-Պուշկինը հաւանական թեկնածու է համարվում ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պաշտօնի համար։ Ասում են, որ Կաուֆմանը հրաժարական է տալիս։

◆ «Товарищъ» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգի քաղաքապետը հետևեալ տուգանքներն է նշանակել. սեպտեմբերի 2-ին 52 կառապանի վրա՝ 137 ռուբլի, սեպտեմբերի 4-ին 77 կառապանի վրա՝ 256 ռուբլի, իսկ ուրիշ զբաղմունքների պատկանող 40 հոգու վրա՝ 2,059 ռուբլի, սեպտեմբերի 5-ին 79 կառապանների վրա՝ 396 ռուբլի։

◆ Երկրագործութեան մինիստրութիւնը, «Юж. Тел.» լրագրի ասելով, ուղարկում է իր պաշտօնեաներին Անդրբայկալեան մի քանի գաւառներ, ուր հողաբաժիններ են յատկացված գաղթականներին և որտեղ տեղական այլացեղ ազգաբնակութեան մէջ խլրտումներ են նկատվում, ուսումնասիրելու այդ խլրտումների պատճառներն ու արտայայտութեան ձևերը։

◆ Սիբիրի լրագիրները հաղորդում են, որ օրըստօրէ աճում է գաղթականների վերադարձը Ուսսուրական շրջանից Խարբինի վրայով դէպի Ռուսաստան։

◆ Պետական գանձարանի դեպարտամենտի տեղեկութիւնից երևում է, որ ներկայ տարվայ յունվարի 1-ից մինչև օգոստոսի 1-ը պետական սովորական եկամուտներ ստացվել են (չը կայ միայն տեղեկութիւն յուլիս ամսում 7 դրամարկղներից և արտասահմանեան բանկիրներից) ընդամենը 1254 միլ. ռուբլի։ 1906 թւի նոյն ժամանակամիջոցի հետ համեմատելով (1207,7 միլ. ռուբլի) 46, 3 միլ. ռուբլի աւելի։ Մասնաւորապէս երկաթուղային եկամուտը նոյն ժամանակամիջոցում ստացվել է 286,4 միլ. ռուբլի, այսինքն 1906 թւի նոյն ժամանակամիջոցի հետ համեմատելով (259, 4 միլ. ռուբլի) 27 միլ. ռուբլի աւելի։

◆ «Рѣчь» լրագրի ասելով Գօրտ-Արտուրի յանձնման գործը քննվելու է նոյեմբերի 27-ին բարձրագոյն զրէական դատարանում։ Դատախազութեան կողմից կանչվում են 35 վկաներ, իսկ պաշտպանութեան կողմից 72։ Վկաների թւում են գտնվում գեներալներ Բալաշովը, Գերմէյստեր Բալաշովը, ադմիրալներ Վիրենը, Եսսին և այլն։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը մօտ ժամանակներս մտադիր է ձեռնարկել 1906 թւի մարտի 4-ի ժամանակաւոր կանոնների վերաքննութեան, նպատակ ունենալով միութիւնների և ընկերութիւնների վերաբերեալ կանոնները փոխարինել մշտական օրէնքներով։

◆ Մինիստրների խորհուրդը, «Рѣчь» լրագրի ասելով, յետաձգել է Սարատովում համալսարան բանալու հարցը, մինչև որ նա կը քննվի Պետական Դումայում, իսկ ժամանակաւոր կուրսերը անմիջապէս բանալու միջնորդութիւնը անհարկի է համարել գոհացնել։

◆ Օդեսայից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Որովհետև քաղաքապետ գեներալ Նովիցկին ցանկութիւն էր յայտնել տեսնել հրէական հիւանդանոցի աւագ բժշկին՝ զինված դաշնակցականների կատարած խուզարկութեան առիթով, ուստի հիւանդանոցի կողմից յատուկ պատգամաւորութիւն ներկայացաւ նրան։ Նովիցկին ցաւակցութիւն է յայտնել պատահած դէպքի մասին։ Քաղաքապետը ընդունել է և մէջտանների ընկերութեան կողմից գիմող պատգամաւորութեանը։ Գեներալ Նովիցկին յայտնել է, որ չէ վախենում հրէաների պաշտպան հռչակվել, որովհետև բոլորին համարում է հաւասար օրէնքի առաջ»։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ

—

Մի քանի օր առաջ Գերմանիայի Էսսէն քաղաքում կայացաւ գերմանական սոցիալ-դեմօկրատական համաժողովը, որ երկու օր զբաղվեց վիճաբանութիւններով հայրենասիրութեան մասին։ Վիճաբանութիւնները շատ կրքոտ էին, թէև նրանք սկսվեցին համեմատաբար անպատասխան, սոցիալ-դեմօկրատական ֆրակցիայի գործունէութեան հաշիւը քննելու ժամանակ։

Ներկայ տարվայ գարնանը, զինուորական բիւրժէտը քննելու ժամանակ ռեյխստագում, սոցիալ-դեմօկրատիայի անունից խօսեցին Բեբել և Նոսկէ։ Նոսկէի ճառը մի ամբողջ փոթորիկ բարձրացրեց կուսակցական մամուլի մէջ. մանաւանդ կծու քննադատութեան ենթարկեց այդ ճառը «Leipziger Volkszeitung», իսկ բոհմունդեան կուսակցական լրագիրը աւարտեց իր յօդուածներից մէկը հետևեալ խօսքերով. «Աւելի լաւ է 10 էրվէ, քան մէկ Նոսկէ»։

Համաժողովում վիճաբանութիւնները սկսվեցին հէնց Նոսկէի ճառից, որը ցանկացաւ վերականգնել իր ճառի իսկական միտքը։ «Ռէյխստագում,—յայտնեց Նոսկէ,—ես ասացի միայն այն, ինչ որ մենք միշտ ասում էինք ագիտացիա վարելու ժամանակ երկրում։ Եթէ Գերմանիայի վրա յարձակումն կը լինի, այն ժամանակ սոցիալ-դեմօկրատները կը պաշտպանեն հայրենիքը նոյնպէս, որպէս և ուրիշ քաղաքացիք։ Ես առարկում էի նոյնպէս սոցիալ-դեմօկրատներին հակահայրենասիրութեան մէջ մեղադրելու դէմ»։ Հետօրն ապա սկսեց մեղադրել կուսակցական մամուլի մի մասը այն բանում, որ նա վերագրել է իրան այնպիսի խօսքեր, որ նա չէ արտասանել, մեղադրել է իրան այնպիսի յանցանքների համար, որ ինքն է հնարել։

Իսկապէս, յարձակումը միայն Նոսկէի վրա չէ եղած. Ֆրակցիայի և մամուլի մի մասը դժգոհ մնաց և Բեբէլի ճառից զինուորական բիւրժէտի վերաբերմամբ. բայց Բեբէլի վրա յարձակվելը վտանգաւոր էր և անյարմար և քաւութեան նոխազը մնաց Նոսկէն։

Համաժողովում, վիճաբանութիւնների առաջին օրը (սեպտեմբերի 17-ին) կուսակցութեան աչքի ընկնող պարագլուխներից մէկ քանիսը՝ Բեբելը, Նոսկէն, Դաւիդը, Հասսէն, Լանդսբերգը, Ֆոլմարը, Հարդէն, Ֆրանկը, Ֆրանկենֆելդը, Ֆրանկը, Ֆրանկենֆելդը, Ֆրանկենֆելդը, Ֆրանկենֆելդ

խոսեցին Շատատագէն, Լէզէբուր, Կ. Լիբկնէխտ և ուրիշները։

Շատատագէն մեղադրում էր Նոսկէին այն բանում, որ նա տարբերութիւն չէր դրել բուրժուազական և պրոլէտարական հայրենասիրութեան միջև։ «Եթէ մէկը ինձ անուանում է հայրենիքի դաւաճան, ես նրան, Նոսկէի պէս, չեմ անուանի սատանայ, այլ կասեմ նրան, որ սիրապետող դասակարգերը խլեցին ինձանից հայրենիք»։

Կարլ Լիբկնէխտը աւելի ևս հեռու է գնում։ Նա պահանջում է եթէ ոչ ագիտացիա զօրքի մէջ, յամենայն դէպս բոլոր ոյժերի լարումն զօրքերի մէջ զգուշաւոր յարուցանելու դէպի զօրանոցը և զինուորական ծառայութիւնը։

Վերջապէս Կաուցկին յայտնում է, որ չէ կարելի խօսել այն մասին, որ այն դէպքում, եթէ յարձակվող կողմը կը լինի ոչ թէ Գերմանիան, այլ մի ուրիշ երկիր, այն ժամանակ սոցիալ-դեմոկրատիան անպատճառ կերթայ կռուելու։ Երբեմն շատ դժուար է տարբերութիւն դնել պաշտպանողական և յարձակողական պատերազմի միջև։ Հարցը միայն այն բանին է յանգում, որ պէտք է վճռել, թէ ինչի որ պատերազմը ծագել է, որի յաղթութիւնն է աւելի շահաւէտ դեմոկրատիայի և պրոլետարիատի համար։ Եթէ օրինակի համար, Մարոքկոն մինչև անգամ և յարձակում գործէր Գերմանիայի վրա, այն ժամանակ սոցիալ-դեմոկրատները չը պէտք է համաձայնվէին պատերազմին, որովհետև ամբողջ Մարոքկոն մի բանաւորի արիւնի գին անգամ չունի։ Ամենից առաջ մենք պրոլետար ենք և ապա արդէն գերմանացիներ։ Ի պաշտպանութիւն Նոսկէի հանդէս եկան Դաւիթ, Ֆոլմար, Բէբէլ և ուրիշները։

Դաւիթը խորհուրդ էր տալիս Նոսկէի հակառակորդներին իրանց յարձակումներն ուղղել և Բէբէլի վրա, որովհետև Բէբէլը Նոսկէից էլ հեռու էր գնում և պաշտպանում էր երիտասարդութեան զինուորական դաստիարակութիւնը և ժողովրդի ռազմական ընդունակութիւնների պահպանումը։

Բէբէլ կրկնում է, որ ինքը վերջին ժամանակներս առնտարակ խօսում է հայրենասիրութեան մասին։ «Սոցիալ-դեմոկրատները հայրենասէր են այն մտքով, որ նրանք կամենում են իրանց երկիրը լաւագոյն դարձնել աշխարհիս վրա։ Նրանք կը պաշտպանեն իրանց հայրենիքը, եթէ նրա վրա կը յարձակվին։ Ասում են, որ չէ կարելի տարբերել պաշտպանողական պատերազմը յարձակողականից։ Դա ճիշտ չէ։ Միշտ կարելի է որոշել՝ թէ ո՞ր կողմն է պատերազմ առաջացրել։ Եօթը տարի առաջ ես ասացի, որ պատերազմի դէպքում Ռուսաստանի դէմ՝ ես պատրաստ եմ զէնք առնել և գնալ պատերազմելու։ Ես այժմ ևս պատրաստ եմ կրկնելու նոյնը»։

Ֆոլմար ամենակարուկ կերպով բողոքում է այն հակամիլիտարիզմի դէմ, որը քարոզվում է այժմ և ի նպաստ որի ցանկանում են բացատրել շտուտգարտեան կօնգրէսի որոշումը։ Այդպիսի հակամիլիտարական պրոպագանդայի համար կուսակցութիւնը չէ կարող պատասխանատու լինել։ Երկար ու կրքոտ վիճաբանութիւնները վերջացան նրանով, որ միաձայն մերժվեց Կիլի կազմակերպութեան առաջարկութիւնը և հաստատվեց հաշիւը։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ներքին

14 սեպտեմբերի

ԱԱՄԱՐԱ։ Բացվեց արդիւնաբերական թուչնաբուծութեան շրջանային ցուցահանդէսը։

ԼՕՁ։ Սեպտեմբերի 13-ի երեկոյեան Լօձում երկաթուղու գծի վրա 2 անյայտ անձեր կրակեցին գնացքի վրա և ծանր կերպով վիրաւորեցին մեքենավարի օգնականին։

ՈՒՄԱՆ։ Լուպանդինայի կալուածքում (Վինիցկի գաւ.) 2 օր տևող հրդեհը ոչնչացրեց երկրագործական գործիքները, շինութիւնները, ինվենտարը, դրանց թուումն էլ մի քանի հազար պուդ ցորեն։

ՎԻՆՆԻՑԱ։ Ցօրլի նահանգը առաջին անգամ կարիք է զգում ապրուստի։ Նահանգական ժամանակագրի հաշուով՝ ամբողջ նահանգում անբերրիութիւնը հասնում է 246,000 պուդի։ Մանաժողովը հարցապնդել է հասարակական աշխատանքների մասին և խնդրամատոյց է եղել պետական գանձարանից բաց թողնել 800,000 ռուբլի հասարակական աշխատանքների համար։

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ։ Սեպտեմբերի 16-ին կը կայանայ Գօնչարովի արձանի բացումը։ Փայտ կը խփվի այն տան վրա, որտեղ ծնվել է հանգուցեալ գրողը։

ՄՕՍԿՎԱ։ Ցերեկվայ ժամը 2-ին բացվեց սովեալներին օգնութիւն հասցնող մանաժողովի համառուսական համագումարը։ Ներկայ են 30 ներկայացուցիչներ զեմստվոների և զանազան նահանգների կողմից։ Նիստը բացվեց Իշխան Լվովի զեկուցումով մանաժողովի գործունէութեան մասին։

ՕԴԵՍՍԱ։ Երեք չարագործներ կամենում էին սպանել խուզարկու ոստիկանութեան գործակալին։ Մօտակայ տան դռնապանը մի քանի անգամ կրակեց, չարագործները իրանց հերթին պատասխանեցին։ Հրացանաձգութեան ժամանակ վիրաւորվեցին երեք անցորդներ։

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ։ Զիգիտ և Պագրօկլ նաւահանգստների միջև գտնվեցին ալմաստ քարեր, որոնք ուղարկվեցին Պետերբուրգ վերջնական հետազօտութեան համար։

ԶԵՐՆԻԳՈՎ։ Գրիմիաչայի ոսոնավանում անկարգութիւններ ծագեցին։ կօզակները կարգը վերականգնեցին։ երկուսը ըստանված են։

### Արտաքին

14 սեպտեմբերի

ՀԱԱԳԱ։ (Հավաս և Բէյտէր)։ Խաղաղարար կոնֆերէնցիայի երրորդ մասնաժողովը 38 ձայնի առաւելութեամբ ընդունեց ծովային ականներին վերաբերվող նոր նախագիծը։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ (Բէյտէր)։ Հավանայից եկած տեղեկութիւնների համաձայն, տեղական իշխանութիւնները ընկել են յեղափոխականների ետևից, որոնք մտադրութիւն ունէին զաւադրութիւն կազմել։ Ասում են, որ այդ շարժումը յարուցել են Նիւ-Եօրկի կապիտալիստները։

ՍՕՖԻԱ։ (Բիւրօ Թղթ.)։ Տարածված լուրերի համաձայն՝ որ իբր կարծեմբը մտադիր է հրաժարական տալ, մինիստրները յայտնում են, որ հրաժարականը չի լինի մինչև ժողովրդական ժողովի նստաշրջանի սկիզբը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ (Բէյտէր)։ Զինուորական մինիստրութեան մէջ չեն հաւատում, որ Կուբայում ապստամբութիւն կը ծագի կառավարութեան դէմ, թէև ընդունում են, որ Հավաննայի և Պինարտէլրիօի նահանգների նեգրերի մէջ յուզմունք է տիրում, որովհետև նեգրերին թոյլ չեն տալիս մասնակցել հասարակական գործերին։

ՊԱՐԻԶ։ (Հավաս)։ Ծովակալ Ֆիլիբէրը հեռագրում է, որ կրկին չորս գեղերի պատգամաւորները հպատակութիւն ցոյց տուին, ընդունելով այն պայմանները, որպիսիք ընդունել են Շաու երեք գեղերը։

15 սեպտեմբերի

ԼԱՏԷՎ։ (Ֆրանսիա) Բարձրացաւ ուժեղ մրրիկ, որ անագին աւերածութիւններ գործեց։ Քաղաքի շրջակայքը և շատ տեղեր ընկղմվեցին։ Ջուրը տարաւ մի քանի կամուրջներ և շինութիւններ։ Երկաթուղային հաղորդակցութիւնը դադարեց։ Ագարակներից մէկում խեղդվեցին 500 գլուխ տաւար։ Բազէում քանդվել են մի քանի տներ. Ֆլորինսկօյում քանդվել է մի գործարան և ամբողջ թաղ, ուր ապրում են 2000 բնակիչ։

ՄԱԼԱԳԱ։ (Ֆաբրա)։ Սեպտեմբերի 13-ին ցերեկով սկսվեց կատաղի հեղեղ։ Երկիւղ են կրում, որ եթէ ջուրը կէս մետր էլ բարձրանայ, սոսկալի դժբաղդութիւններ են սպասվում։

ՎԻԵՆՆԱ։ (Բիւրօ Թղթ.)։ Դուքս Գօնզաուսակին ընդունվեց Ֆրանց-Յովսէփ կայսրից ունկնդրութեան։

ՊԱՐԻԶ։ (Հավաս)։ Կազաբլանկի բայսնում աւազոտ փոթորիկ է բարձրացել։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ։ Քաղաքում բացի հապօնացիներից և չինացիներից՝ ապրում են երկու ռուսներ. ուրիշ օտարազգիներ չը կան։ Քաղաքում երթևեկութիւն չը կայ. առևտուր համարեա չը կայ, շատ մեր դատարկ են։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վիներական (սիֆիլիս), միզասեռ. հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբուժեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներակ., վիրաբուժութեան։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԴՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Վճարը 50 կ.։ Զբաղվողները դէր։ համախոզդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բ ԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վիներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։
Կուկիա, Սեմեոնովսկի փողոց, № 16։
(ու. կ. ե.) 5—30


### ՀՐԱՒԷՐ

Այսօր, ամսոյ 16-ին, առաւօտեան 12 ժամին Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում լինելու է ծխականների ժողով նոյն եկեղեցու ծխական օր. դպրոցի համար մի հոգաբարձու ընտրելու և նոյն դպրոցի նիւթական մասին խորհրդակցելու. ուստի խնդրում եմ նոյն եկեղեցու յարգելի ծխականներին շնորհ բերել յիշեալ ժամին ժողովին մասնակցելու։

Սարգիս ա. քահ. Շիօյեանց
1—1


ՎԱՌ. ԵՒ ՍՏ.
ՍՄԲԱՏԵԱՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ
Բօսոֆից Դ/վ. փոխադրվում է Թիֆլիս։ Նպատակն է՝ երաշխաւորութեամբ պատրաստել հայ երկսեռ երեխաներ ցանկացած միջնակարգ դպրոցը մտցնելու և հիմնօրէն սովորեցնել մայրենի լեզուն։ Կայ երկու դիշերթիկի տեղ։ Պայմանների մասին ամենայն օր, Բէյհրութեան փ., տ. Սմբ. Զանփոլադեանի № 60։ 1—10

Գայիանեան ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է, որ այն ծնողները, որոնք խընդիրք են տուել I բաժանմունքը ընդունելու իրանց երեխաներին, պարտաւոր են մինչև ամսոյս 18-ը անպատճառ ներկայացնել ուսման վճարի առաջին մասը—20 ռուբլի, այլապէս նրանց խնդիրքը կը մերժվի։ Դպրոցի միւս դասարանների աշակերտուհիների ծնողները ևս պարտաւոր են ներկայացնել առաջին կիսամեակի ուսման վճարը մինչև հոկտեմբերի 1-ը։ 1—2

ՉԱՏ ԷԺԱՆ
ԾԱԽՎՈՒՄ Է՝
նոր տաքած կահկարասիք մարմարեայ ստոյկայով, հայելու դռներով, որը պէտքական է կօնդիտերական, բեստորանի և կէօլնչալ մագազինների համար։ Ծախվում են նաև կալբասի գործարանի գործիքներ, վիվէսկա, կշեռք և այլն։ Հարցնել՝ Եկեղեցական հրապարակ տուն Արզումանեանցի, 10—2 ժամը ցերեկվայ։ 1—2

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
բոլորովին նոր ձևի պատրաստված ՆՍՏԱՐԱՆՆԵՐ ուսումնարանների համար՝ ամենամաւելի գներով։
Հասցէն՝ Католическій тупикъ № 4.
(ա. օ.) 3—5

ՉԻԳՐԱՇԷՆԻ հայոց դպրոցի հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է՝ այս հանրակութիւնը, որ երկուշաբթի, ամսոյս 17-ին, առաւօտեան ժամի 10-ին, իր խնամքին յանձնված դպրոցում, մաղթանքի ժամանակ, կատարվելու է հոգեհանգիստ դպրոցիս բարերարուհի հանգուցեալ տիկ. Կլրեակեանի և բարերար հանգուցեալ Տիգրան Գիւլնազարեանի յիշատակին։ Դպրոցիս աշակերտ-աշակերտուհիների ծնողներին և հանգուցեալների յիշատակը յարգողներին խնդրում ենք ներկայ լինել։
Ի դիմաց հոգաբարձութեան՝
Աղ. Քալանթարեան
1—1

Լոյս են տեսել
ԱՐՇԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆԻ
Փոխադրութեամբ
ՄՈՍԿՎԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ փոխադրած և յարմարեցրած հայոց դպրոցների ծրագիրներին։
1) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», առաջին տարվայ դասընթաց, առանձին գրքոյկով, գինն է . . 12 կ.
2) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Ա., առաջին և երկրորդ տարվայ դասընթաց միասին. Բ. տպագր., գ. 30 կ.
3) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Բ., երրորդ տարվայ դասընթաց, Բ. տպագրութիւն, գինն է . 30 կ.
4) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Գ., չորրորդ տարվայ (I դասարանի) դասընթաց, Բ. տպ., գինն է 30 կ.
5) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Դ., կոտորակներ, հինգերորդ տարվայ (II դասարանի) դասընթաց, կոտորակների խնդիրներով և խնդիրները օրինակների ձևով լուծելու բացատրութիւններով (ըստ Շապօշնիկովի և Վալցովի), գ. 40 կ.
6) «Զեռնարկ թուաբանութեան» (ըստ Կիսելովի), գինն է . . 50 կ.
7) (Մամուլի տակ է) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Ե., համեմատութիւններ և իրանց կանոնները (ըստ Շապօշնիկովի և Վալտէի)։
ԳՈՒՄԱՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ ԲԱՒԱՐԱՐ ՁԵՂՔ
Դիմել՝ Тифлисъ, Абасъ-Абадская площадь Аршаку Спарапетянцу կամ «Գուսանեմերգ» և միւս գրախանութներին։
1—5

ՀԱՐԿԱՒՈՐ Է
հայ բօննա մի երեք տարեկան երեխայի համար։ Հասցէն՝ «Մշակի» խմբագրատանը։
(կ. չ.) 1—2

«Կորչեն աղամանները»
Ոսկէ մասիվ մատանի 56 պր. անգլիական ձևի պարիզեան աղամանդով, ամուր շինած, գինը 2 ր. 75 կ., 2 հատը 5 ր. ոսկէ օղեր 1 Պարիզի աղամանդով, կորչելուց պահպանող արտօնագրած փակիչով. գինը 1 զոյգի 3 ր. 75 կ., ոսկէ «ՄԱՐԿԻԶ» մատանի, պարիզեան աղամանդներով զարդարած՝ գինն է 4 ր. և 8 ր.։ Նշանդրէքի մասիվ մատանի. գինն է 1 հատի 3 ր. 75 կ., 2 հատի—7 ռուբ.։ Շքեղ ոսկէ գարնիտուր 56 պր. մէկ արկղում, որի մէջ կայ՝ բրոշկա, մատանի և 1 զոյգ օղեր, գինը 8 ր. 50 կ.։ Ուղարկվում են վերադիր վճարով. գրաւական չի պահանջվում։ Ուղարկելը պատուէր առուղի հաշուով։
Հասցէն՝ Т-ва „Индѣецъ“. Варшава, 1-ая почт. к-ра, ящикъ № 30. Թղթակցութիւնը ռուսերէն կամ գերմաներէն լեզուներով։
4—5

ԴՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՕԴՈՎ
Պատրաստում եմ դպիրներ հայոց եկեղեցիների համար, ընդամենը չորս ամսվայ ընթացքում անցնելով ամբողջ հայկական երաժշտութիւնը (շարական, ժամագիրք, պատարագի արարողութիւն)։ Սովորողները ապրում են էջմիածնում և կարող են մասնակցել ժամերգութեան։ Վճարում են չորս ամսվայ համար 50 ռուբլի, որից 25 ր. դասընթացի սկզբում։ Դիմել այս հասցէով՝
С. Эчміадзинъ архидіакону Исраелу.
6—6

Մի ինտելիգենտ ընտանիք
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ՆԱԽԼԷԲՆԻԿՆԵՐ
կարելի է դասերի կրկնողութեամբ։ Պատրաստում է աշակերտներին բոլոր միջնակարգ դպրոցների մինչև 4-րդ դաս.։
Հասցէն խմբագրատանը Ս. Եսայեանից կամ՝ Уголъ Екатерининской и Панасевича № 3 Есаянъ, կոմիսարիատի ուսուցիչարանին կից։
(ա. օ.) 2—5

Մայրենի լեզու, առաջին տարի, նոր տիպ, բազմաթիւ նոր պատկերներ, գրութեան օրինակները տպագրին զուգընթաց. ու. իւ. յ տառերի համար նոր նշանագրեր, որոնք փարատում են այդ տառերի պատճառած բոլոր դժուարութիւնները և գրքի վերջում փոխարինվում են իրանց սովորական ձևերով։—Գինը 20 կ., գումարով 13 կ.։
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երկրորդ տարի, նոր տիպ, գինը 30 կոպ., գումարով 20 կ.։
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երրորդ տարի, նոր տիպ, բարեփոխած և լրացրած. հայկական բաժինը խմբագրած է նորից, հայի առանձին կեանք, սովորութիւններ, աւանդութիւններ, գիւղացիական կեանք. գինը 50 կոպ., գումարով 33 կոպէկ։
Միւս գրքերի գները և վաճառման պայմանները նոյնն են մնում։ Գլխաւոր պահեստը Կենտրոնական գրավաճառանոցում։
Նիկողայոս Տէր-Ղևոնդեան
3—5

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն և ուրիշ մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքներն սկսվելու են 1907 թ. սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։
Դասընթացը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում՝ Н. В. Абраамяну, Николаевская улица, № 22, ամենայն օր։
Վերևում յիշած ձեռնարկ ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 30 կոպէկ։
(կ. ե. ն.) 6—10

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ
Արտասահմանում տպագրված 96 գոյնով 63—50 սանտ. մեծութեամբ
ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ 3-ՐԴ ԷՋԱՆԱԳԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲԼԻ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄԸ
ՈՐՊԷՍ ԶԱՐԴ
ԺԱՄԱՑՈՅՑԻ
ՁՂԹԱՑԻՑ ԿԱԽԵԼՈՒ
ՀԱՄԱՐ
Գինն է՝ ՈՍԿՈՒՑ 18 ր.
ԱՐԾԱԹԻՑ 3 »
ճանապարհածախսով
ԵՒ ՈՐՊԷՍ
ԲՐՕՇԿԱ
ԿԱՆԱՆՑ
ՀԱՄԱՐ
Գինն է՝ ՈՍԿՈՒՑ 15 ր.
ԱՐԾԱԹԻՑ 3 »
ճանապարհածախսով
Առանց կանխավճարի չէ ուղարկվում
(հ. կ. ե.) Դիմել՝ Тифлисъ. Вельяминовская, № 24, В. Варданяну. 2—10

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. ՄԻ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. № 24/4).
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմանական. ֆրան., տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմանական. ֆրան., տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմանական. ֆրան., 2) Քաղաքատնտեսութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսդիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թիւն, 4) Օրէնսդիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թիւն, 6) Թուաբանութիւն համարիչի վրա, 7) Վարչագրութիւն (ամենավաղ ձեռքի ուղղով)։ Թղթակցութիւն, 6) Թուաբանութիւն համարիչի վրա, 7) Վարչագրութիւն (ամենավաղ ձեռքի ուղղով)։ Ամբողջ Առարկաներն ուսուցանվում են Ռուսաստանի, Եւրոպայի առևտրական սկզբունքների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։
Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ
Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնն ամեն օր ժ. 10—12 և 4—7։
Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերից։
Կուրսերի հիմնադիր՝ առևտ. գիտութիւնների կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
5—10
(ա. օ.)


Էլեկտրոպատրաստ «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіаковъ съ С-ми. Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.